ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ ԼՅՈՒՎԵՆ-ԼԻՄԲՈՒՐԳ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ

Հեղինակ՝ Գերլինդե Մնոք, տվյալների կառավարում, Լյուվեն-Լիմբուրգ համալսարան քոլեջ

Տվյալների մշակում և կառավարում

- Տեղեկատվության հավաքագրում
- Տվյալների խմբավորում՝ չմշակված տվյալներ մշակված տվյալներ
- Հասանելիություն միօրինականացված ձևաչափով
- Հստակ պատկերացում
- Համագործակցության և որոշումների կայացման դյուրացում

Տվյալների կառավարումը տեղեկատվության հավաքագրումն է: Տվյալների կառավարման և մշակման նպատակը տվյալների խմբավորումն ու վերահսկումն է, ինչպես նաև այս տվյալների օգտագործումը տարբեր աղբյուրների միջոցով՝ կրթական գործընթացում ուսանողների ներգրավվածության վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու և քաղաքականության արդյունավետության բարձրացմանն աջակցելու նպատակով: Տվյալների հավաքագրման միջոցով ցանկանում ենք իմանալ, թե ովքեր են մեր ուսանողները: Տվյալները հնարավորություն են տալիս տեսնելու ավելին, քան սովորաբար տեսանելի է՝ հնարավորություն ընձեռելով ուշադրություն դարձնելու տարբեր տարրերի վրա:

Օրինակ, ուսումնական տարվա սկզբում բոլորը՝ համալսարան քոլեջի պրոռեկտորը, ֆակուլտետների դեկանները, ծրագրերի ղեկավարները, ցանկանում են իմանալ, թե քանի ուսանող է ընդունվել: Առաջին կիսամյակի ավարտին անհրաժեշտ է ստուգել ուսանողների թվաքանակը՝ շարժունությունը արձանագրելու նպատակով: Ուսանողները հաճախ տեղափոխվում են մի ծրագրից մյուսը, քանի որ պարզում են, որ իրենց սկզբնական ընտրությունը չի արդարացնում իրենց ակնկալիքները:

Օրինակը ցույց է տալիս, որ տվյալների մշակման համակարգը հետաքրքիր է անձնակազմի և ղեկավար կազմի համար քաղաքականության և գործադիր մակարդակներում՝ պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների ղեկավար կազմ, որակի ապահովման, ուսանողների աջակցության և այլ անձնակազմեր: Հիմնական օգտատերերը քաղաքականություն մշակողներն են: Տվյալների մշակման համակարգը նախատեսված է որոշումների կայացման և համագործակցության դյուրացման համար: Տվյալները կարևոր տեղեկատվություն են

տալիս քաղաքականության նպատակների և ԳԱՑ-երի սահմանման համար:

Լյուվեն-Լիմբուրգ համալսարան քոլեջի տվյալների մշակման համակարգի բովանդակությունը:

Տվյալների մշակում և կառավարում

1. Առանցքային տվյալներ
   - ուսանողներ
     - ուսանողների թվաքանակ
     - ուսանողների արդյունավետություն
     - աստիճան
   - անձնակազմ
     - թիվը և դրույթաչափը
   - հետազոտական աշխատանքներ

2. Գործունեության առանցքային ցուցանիշներ /ԳԱՑ/
   - ռազմավարական նպատակների իրականացման չափում

Strategic goal	KPI	Actual level	Target	Trend
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	

Տվյալների մշակման նշված համակարգում կան երկու հիմնական բաղադրիչներ՝ առանցքային տվյալներ և ԳԱՑ-եր:

1. Առանցքային տվյալները համախմբում են ուսանողների, անձնակազմի և հետազոտության վերաբերյալ տվյալներ
   - ուսանողների վերաբերյալ տվյալներն ներառում են ուսանողների թվաքանակը, ուսման արդյունավետությունը, աստիճանների թիվը, ուսման տևողությունը և այլն,
   - անձնակազմի վերաբերյալ տվյալները ներառում են անձնակազմի թվաքանակը՝

ըստ կրթական ծրագրի և ծանրաբեռնվածությունը,

- հետազոտության վերաբերյալ տվյալները ներառում են հետազոտական ծրագրերի թիվը, հետազոտությանը հատկացվող բյուջեն, ընդգրկված գործընկերներին և այլն:

Առանցքային այս տվյալները տրամադրում են մեզ կարևոր և հաճախակի օգտագործվող տվյալներ:

2. ԳԱՑ-երը ռազմավարական նպատակների իրականացման չափումներն են: Գործիքատախտակը ցույց է տալիս ԳԱՑ-երի թիրախը, փաստացի մակարդակը և զարգացումը (շաբաթական, ամսական..... թարմացումներ): Այն ցույց է տալիս, թե ինչպես ենք մենք առաջ շարժվում և արդյոք հասնում ենք թիրախին:

ԳՈՐԾԻՔԱՏԱԽՏԱԿՆԵՐ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Ներքին ցանց
- Գործիքատախտակներ և հաշվետվություններ
  - -բազմակողմանի
  - -պատմական տեսություն
  - -փոխներգործուն /ինտերակտիվ/
- Առանցքային աղյուսակներում (Excel-ում) առկա մանրամասն տեղեկություն

Տվյալների մշակման մեր համակարգը տեղադրված է համալսարան քոլեջի ներքին կայք էջում (internal website): Sharepoint (Microsoft) առցանց գործիք է, որտեղ ներկայացված է տվյալների մշակման մեր համակարգը:

Sharepoint-ում գործիքատախտակները ներկայացնում են տվյալներ աղյուսակների կամ գծապատկերների միջոցով: Հաշվետվություններն ինտերակտիվ են, կարելի է ընտրել բոլոր անհրաժեշտ փոփոխականները (ծրագրային մակարդակ, ուսումնական տարի, ուսանողների սեռ և այլն) և ստեղծել սեփական հաշվետվությունը: Հաշվետվությունները պարունակում են պատմական տվյալներ, հետշտորեն կարելի է տեսնել նախորդող տվյալները (մեկ տարի առաջ, մեկ ամիս առաջ, մեկ շաբաթ առաջ և այլն):

Ուսանողների թվաքանակը ըստ բաժինների. վերջին 5 տարիների պատկերը



Յուրաքանչյուր հաշվետվությունպարունակումէհամալսարան-քոլեջիկազմակերպական կառուցվածքը: Աստիճանակարգության /հիերարխիա/ տարբեր մակարդակներում ներկայացված են մեր արդյունքները: Հեշտ է ինստիտուցիոնալ մակարդակից անցում կատարել ֆակուլտետային մակարդակ, հետո՝ կոնկրետ ծրագրի մակարդակ:

Լյուվենի համալսարան քոլեջի առողջապահության և տեխնոլոգիայի բաժնի աստիճանակարգության /հիերարխիայի/ օրինակ

Ուսանողների թիվը 2014-2015 (նոյ. –հունվ.)	2014-2015 Նոյ.	2014-2015 Դեկտ	2014-2015 Հունվ	Ֆակուլտետի տարբեր մակարդակների աստիճանակարգություն /հիերարխիա/	
Լյուվենի համալսարան քոլեջ	8.655	8.638	8.661	←	Ինստիտուցիոնալ մակարդակ
Առողջապահություն և տեխնոլոգիա	2.566	2.557	2.558	←	Ֆակուլտետային մակարդակ
Բակալավրի աստիճան- Առողջապահություն և տեխնոլոգիա	2.255	2.243	2.241	←	Հիմնական ծրագրեր
Կենսաբժշկական լաբորատոր տեխնոլոգիա	357	357	360	←	Կոնկրետ ծրագիր
Քիմիա	229	229	229	←	
Կիրառական տեղեկատվական տեխնոլոգիա	467	464	461	←	
Բուժքույրություն	764	760	759	←	
Մանկաբարձություն	275	273	270	←	
Մանկաբարձություն	163	160	162	←	
Բակալավրի գերազանցության աստիճան- Առողջապահություն և տեխնոլոգիա	208	209	211	←	Առաջատար ծրագրեր
Շտապօգնություն	76	76	75	←	Կոնկրետ առաջատար ծրագիր
Մանկաբուժություն	49	51	54	←	
Հոգեբուժություն	56	55	55	←	
Ուռուցքաբանություն	27	27	27	←	

Գործիքատախտակների հետ մեկտեղ մենք օգտագործում ենք նաև Excel-ի առանցքային աղյուսակներ, որոնք նույնպես կապված են տվյալների խորանարդի /datacube/ հետ: Excel-ի առանցքային աղյուսակներին ծանոթ լինելու դեպքում հեշտ է միացնել և օգտագործել անհրաժեշտ հատկանիշները (ուսանողների սեռ, տարիք, կրթաթոշակ և այլն): Հաշվետվության այս գործիքի աղբյուրը բազմակողմանի տվյալների տվյալների խորանարդ է/datacube/:



Տվյալների մշակման համակարգի օգտագործման օրինակ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍԵՌԸ

- Առավել շատ վերլուծություն
- Գենդերային անհավասարություն
- Գործողությունների պլան

Ամփոփելով՝ ներկայացնում ենք ուսման արդյունավետության օրինակ՝ կիրառված տվյալների մշակման համակարգում: Ուսման արդյունավետությունը հաշվարկվում է կրեդիտների և ուսման միավորների հարաբերակցությամբ: Վերևում ներկայացված գծապատկերը ներկայացնում է Լյուվենի համալսարան քոլեջում արական և իգական սեռի ուսանողների ուսման արդյունավետությունը վերջին երեք տարիների ընթացքում: Յուրաքանչյուր տարվա համար արական և իգական ուսանողների միջև նկատվում է ճեղքվածք /gap/: Նման գծապատկերը ենթադրում է, որ ահնրաժեշտ է ավելի շատ վերլուծություն կատարել:

Թվերով նշված հարաբերակցությունը ներկայացված է ինստիտուցիոնալ մակարդակում: Անհրաժեշտ է իմանալ ավելին այս հարաբերակցության մասին:

Նախևառաջ հետաքրքիր է, թե ինչպիսին է հարաբերակցությունը յուրաքանչյուր կրթական ծրագրի համար: Արդյոք կա՞ ճեղքվածք յուրաքանչյուր ծրագրում: Վերից վար կազմակերպական կառուցվածքը տվյալների մշակման համակարգում անմիջապես տալիս է պատասխանը: Մանրամասներն առավել խորը ուսումնասիրելով՝ ստանում ենք տվյալների ավելի ստույգ պատկեր: Այդ տվյալների միջոցով իրականացվող գործընթացների վերաբերյալ տեղեկացվածությունը նույնպես կարևոր է տվյալները ճշգրիտ և համապատասխանորեն մեկնաբանելու համար:

Տվյալները կարող են պարզաբանվել միայն իրենց համատեքստում, որն էլ հաճախ բացատրում է իրավիճակը:

Մտահոգված լինելով արական սեռի ուսանողների ցածր ցուցանիշներով՝ Լյուվենի համալսարան քոլեջում մենք մեկնարկեցինք գենդերային ծրագիր՝ ուսումնասիրելու գենդերային անհավասարությունը: Հետազոտողները ուսանողների հետ հարցազրույցներ անցկացրեցին՝ պարզելու ծրագրի վերաբերյալ նրանց կարծիքն ու ակնկալիքները, դիդակտիկ համակարգերի և թեստերի վերաբերյալ նրանց ընկալումը, կարիերայի ուղղորդումը և այլն: Մենք ուսումնասիրում ենք առկա փորձը՝ ավելի շատ տվյալներ ձեռք բերելու նպատակով:

Ծրագիրը դեռևս ընթացքի մեջ է: Երբ հետազոտությունն ավարտվի, հուսով ենք այն կհանգեցնի դուրս բերված խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների պլանի մշակմանը: Եվ մի քանի տարի անց հուսով ենք կկարողանանք ներկայացնել նոր տվյալներ, որտեղ ավելի քիչ ճեղքվածք կլինի արական և իգական սեռերի ուսանողների ցուցանիշների միջև:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալների մշակում

Տվյալները հնարավորություն են տալիս տեսնել ավելին, տեսնել ավելի լավ և տեսնել տարբեր բաներ:

ԻՆՉ Է ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ

Հեղինակ՝ Հայնս Ուլրիխ Շմիդտ, Բոն, Գերմանիա
Կոնտակտային տվյալներ՝ ***heinz-ulrich.schmidt@t-online.de***

1. Ի՞նչ է կրթական վերջնարդյունքը

Կրթական վերջնարդյունքները նշանավորում են հարացուցային փոփոխությունը նախքան Բոլոնիայի գործընթացը կիրառվող ավանդական դասախոսակենտրոն դասավանդման և ուսուցման ձևերից դեպի ուսանողակենտրոն դասավանդում և ուսուցում: Հայտնի ամերիկացի ծաղրանկարիչ Բուդ Բլեյկի /մահացել է 2005թ./կողմից ներկայացված նկարում գեղեցիկ կերպով ցուցադրվում է դասավանդումից դեպի ուսուցում հարացույցի փոփոխությունը:

Գոյություն ունեն կրթական վերջնարդյունքների տարբեր սահմանումներ: Ներքոնշյալ սահմանումները կարելի է համարել ամենահամապատասխան տարբերակները: Կրթական վերջնարդյունքները՝

- նկարագրում են, թե ինչ է ակնկալվում, որ ուսանողը իմանա, հասկանա, կիրառի, վերլուծի, նկարագրի և/կամ կարողանա դրսևորել կրթական ծրագրի (առավել ընդհանրական մակարդակում) և յուրաքանչյուր մոդուլի ավարտին (առավել մանրմասն)՝ ձեռք բերելով որակավորումներ և կարողություններ,
- աջակցում են դասախոսական կազմին կենտրոնանալ այն բաղադրիչների վրա, որոնք նրանք ցանկանում են, որ ուսանողները ձեռք բերեն /գիտելիք, կարողություններ և դիրքորոշում/՝ իրականացնելով «Բոլոնիայի գործընթացի հարացուցային փոփոխությունը», այն է՝ դասախոսակենտրոն դասավանդումից դեպի ուսանողակենտրոն դասավանդում և ուսուցում,
- ուղղորդում են հնարավոր դիմորդներին և գործատուներին՝ տեղեկացնելով այն ընդհանրական և առարկայական գիտելիքի ու իմացության մասին, որն ունենալու է շրջանավարտը (սա կարևոր է աշխատաշուկայի համար- շրջանավարտների զբաղունակություն): Այդ իսկ պատճառով դրանք պետք է գնահատվեն:

2. Միջազգային փորձառություն և լավագույն փորձի օրինակներ

Բարձրագույն կրթության կրթական ծրագրերն ու մոդուլները պետք է հիմնված լինեն կրթական վերջնարդյունքների վրա՝ համաձայն ազգային (որակավորումների ազգային շրջանակ) և միջազգային (բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական շրջանակ) մակարդակներում ճանաչված որակավորումների, որոնք շնորհվում են բակալավրի, մագիստրոսի և հետբուհական կրթության /PhD/ աստիճաններին: Որակավորումների ազգային շրջանակը և բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական շրջանակը պահանջում են որակավորումներ, որոնք ուղղված են դեպի ծրագրային մակարդակ՝ հիմնվելով միջազգայնորեն համաձայնեցված նկարագրիչների վրա: Վերջիններս այսպես կոչված Դուբլինյան նկարագրիչներն են: Դուբլինյան նկարագրիչները միջազգային մակարդակում սահմանում են օրինակ.

«առաջին շրջափուլի (բակալավրի աստիճան) ավարտին որակավորումները շնորհվում են այն ուսանողներին, ովքեր՝

- դրսևորել են գիտելիք և իմացություն ուսումնառության այնպիսի բնագավառում, որը հիմնվում է ընդհանուր միջնակարգ կրթության վրա և սովորաբար այնպիսի մակարդակում է, որին հասնում են մասնագիտական նյութերի ուսումնասիրման

և ուսումնառության բնագավառի հիմնադրույթների իմացության շնորհիվ,

- կարող են իրենց գիտելիքն ու իմացությունը կիրառել իրենց աշխատանքային կամ մասնագիտական ոլորտում արհեստավարժ մոտեցման միջոցով, և ունեն կարողություններ, որոնք սովորաբար դրսևորվում են իրենց ուսումնառության առարկայի շրջանակներում փաստարկների մշակման ու հիմնավորման և խնդիրների լուծման միջոցով,
- ունեն համապատասխան տվյալների հավաքագրման և մեկնաբանման ունակություն (սովորաբար իրենց ուսումնառության առարկայի շրջանակներում)՝ առաջ քաշելու համապատասխան սոցիալական, գիտական և բարոյական խնդիրների շուրջ մտորումների վրա հիմնված դատողություններ,
- կարող են տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ և լուծումներ հաղորդել ինչպես մասնագետներին, այնպես էլ ոչ մասնագետներին,
- զարգացրել են ուսումնառության այնպիսի հմտություններ, որոնք իրենց անհրաժեշտ են ինքնուրույն շարունակելու հետագա ուսումնառությունը:

Բոլոր կրթական վերջնարդյունքները պետք է սահմանվեն և նկարագրվեն ծրագրային մակարդակում ընդհանրական կերպով, իսկ մոդուլի /դասընթացի/ մակարդակում՝ առավել մանրամասնորեն՝ արտահայտված ՈԱԾ-ին և Դուբլինյան նկարագրիչներին համապատասխան որակավորումներով, մասնավորապես՝

- գիտելիք և իմացություն
- գիտելիքի և իմացության կիրառում
- դատողություններ
- հաղորդակցություն
- սովորել, թե ինչպես սովորել

Դասախոսների, ուսանողների և որակի ապահովման տեսանկյունից ծրագրի կամ մոդուլի/դասընթացի մակարդակում գնահատման պահանջներ սահմանողների համար կրթական վերջնարդյունքների դերն ու կարևորությունը շեշտադրելու նպատակով անհրաժեշտ է նշել, թե՝

ա/ ինչպես ձևակերպել ակնկալվող կրթական վերջնարդյունքները

- Կիրառել ակտիվ բայեր /Բլումի տաքսոնոմիային համապատասխան՝ գիտելիք, ըմբռնում, կիրառում, վերլուծություն, սինթեզ, գնահատում/
    - բայեր, որոնք կարող են օգտագործվել ***գիտելիք*** բաղադրիչի համար *սահմանել, նկարագրել, թվարկել, ուրվագծել, ճանաչել, առնչվել, փաստել, գրել, չափել, շարադրել, դուրս բերել, բացահայտել, ցույց տալ, անվանել*
    - բայեր, որոնք կարող են օգտագործվել ***ըմբռնում*** բաղադրիչի համար *եզրահանգել, նկարագրել, համեմատել, դասակարգել, հակադրել,*

փոխարկել, քննարկել, տարբերակել, բացահայտել, գնահատել, բացատրել, ձևավորել, օրինակներ բերել, վերարտադրել, թարգմանել, արտահայտել, լուսաբանել, քննարկել, կանխատեսել, ներկայացնել, ընտրել

- բայեր, որոնք կարող են օգտագործվել ***կիրառում*** բաղադրիչի համար *կիրառել, գնահատել, փոխել, ընտրել, ցուցադրել, բացահայտել, հաշվել, լուսաբանել, կանխատեսել, պատրաստել, առնչվել, ցուցադրել, լուծել, ուսումնասիրել, ստուգել, հաշվարկել, կառուցել, փոխել, դասակարգել, փորձարկել*
- բայեր, որոնք կարող են օգտագործվել ***վերլուծություն*** բաղադրիչի համար *վերլուծել, առանձնացնել, դասակարգել, կարգավորել, համեմատել, եզրակացնել, քննադատել, ախտորոշել, բացատրել, միավորել, տարբերակել, առանձնացնել, ուսումնասիրել, հիմնավորել, ենթադրել*
- բայեր, որոնք կարող են օգտագործվել ***սինթեզ*** բաղադրիչի համար *հաշվի առնել, պնդել, միավորել, կազմել, եզրակացնել, ստեղծել, դուրս բերել, զարգացնել, ձևավորել, ընդհանրացնել, առաջացնել, փոխարինել, ներառել, ձևափոխել, կարգավորել, կազմակերպել, պլանավորել, առաջարկել, ձևավորել, հնարել, վերահաստատել, զեկուցել, վերանայել, ընտրել, ամփոփել, սինթեզել, սովորեցնել, պատմել*
- բայեր, որոնք կարող են օգտագործվել ***գնահատում*** բաղադրիչի համար *գնահատել, որոշել, սահմանել, խորհուրդ տալ, ընտրել, տարբերակել, համեմատել, եզրահանգել, քննադատել, պաշտպանել, դատել, արդարացնել, վարկանշավորել, ամփոփել, դասակարգել:*

- Շեշտադրել դասավանդում-ուսուցում-գնահատում-զբաղունակություն հարաբերություններ «կառուցողական համապատասխանություն»

Որպես ծրագրային մակարդակում Դուբլինյան նկարագրիչներին համապատասխան ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձևակերպման լավ օրինակ հանդես է գալիս «Կառավարում» մագիստրոսական ծրագրի հետևյալ օրինակը՝

«Կառավարում» մագիստրոսական ծրագրի նպատակն է ձեռք բերել որակավորում՝ համալրելով բակալավրի ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ինչպես նաև առաջնորդվելով էթիկայի կանոններով:

Սա ներառում է ընկերություններում և շահույթ չհետապնդող կազմակերպություններում անծանոթ, անորոշ, կոնֆլիկտային և անհրաժեշտ լիդերություն դրսևորելու ու որոշումներ կայացնելու իրավիճակներում պատասխանատվության ստանձնման կարողություն: Այս ամենի հիման վրա ծրագիրը հաջողությամբ ավարտած շրջանավարտները կարող են ընդհանուր կառավարման դաշտում ունեցած իրենց գիտելիքը և կարողությունները

համակցել այն մասնագիտացումների հետ, որոնք նրանք ընտրել են՝ շարունակելով ինքնուրույնաբար զարգացնել իրենց գիտելիքն ու կարողությունները, հաղորդակցել և իրականացնել գաղափարներ, հավանության արժանացնել այդ գաղափարները՝ ձևավորելով և փոփոխելով հանձնարարությունների այն շրջանակը/ոլորտը, որը նրանց հանձնարարված էր (և դրանից բացի ձևավորելով և փոփոխելով ողջ կազմակերպությունն ու իր միջավայրը): Այս նպատակի անբաժանելի մասն է կազմում համապատասխան արդյունավետ մոտեցումներին համահունչ ինքնուրույնաբար հետազոտություն իրականացնելու կարողության ձեռքբերումը: Հետևաբար շրջանավարտները կարողանում են լիդերության դրսևորման և որոշումների կայացման համալիր իրավիճակներում իրականացնել հիմնավոր վերլուծություն և գնահատում՝ կիրառելով գիտական տեսություններ և մեթոդներ (մասնավորապես գիտամշակութային ոլորտում):

Դուբլինյան նկարագրիչներին համապատասխան մոդուլի/դասընթացի մակարդակում ակնկալվող կրթական վերջնարդյունքների սահմանման լավ օրինակ է նույն մագիստրոսական ծրագրի հետևյալ մոդուլը՝ «Արդյունքահեն վերահսկում»:

Ուսանողները, ովքեր հաջողությամբ ավարտեն այս մոդուլը/դասընթացը կկարողանան՝

- բացահայտել թիրախների և կատարողականի ցուցանիշների վրա հիմնված կառավարումը՝ որպես ձեռնարկատիրական ոլորտում վերահսկող գործիք
- նկարագրել տարբեր շահակիցների՝ վերահսկմանն առնչվող պահանջներն ու ակնկալիքները
- սահմանել և կիրառել գործունեության առանցքային ցուցանիշները /ԳԱՑ/
- վերլուծել և քննադատորեն ուսումնասիրել ֆինանսական մոդելների, ցուցանիշների, արդյունքների ներկայացման և հաղորդակցման միջոցների կատարողական բնույթը
- հասկանալ ձեռնարկատիրական գործունեության հաշվողական բնույթը՝ որպես կազմակերպության ֆինանսական կառավարման մեթոդ և որպես հասարակական կառույց:

Այս ծրագրերը ազգային կամ միջազգային մակարդակում հավատարմագրելիս որակի ապահովման գործակալությունները ստուգում են, թե արդյոք կրթական վերջնարդյունքները ծրագրի ինչպես նաև մոդուլի/դասընթացի մակարդակներում համոզիչ և թափանցիկ կերպով սահմանված և նկարագրված են՝ հետևելով Բուխարեստի կոմյունիկեի մեջբերմանը. «կրթական վերջնարդյունքների մշակումը, ըմբռնումը և գործնական կիրառումը չափազանց կարևոր է ԿՓԵՀ-ի, դիպլոմի հավելվածի, ճանաչման, որակավորումների շրջանակի և որակի ապահովման գործընթացների հաջողությամբ իրականացման համար, որոնք միմյանց փոխկապակցված են»:

բ/ Մարտահրավերներ դասախոսների համար

1. Հարացույցի փոփոխություն դասավանդման գործընթացում

Կրթական վերջնարդյունքների սահմանումն ու կիրառումը անհրաժեշտաբար կապված են ուսանողակենտրոն դասավանդման և ուսուցման հետ: Ի՞նչ է սա նշանակում: Սա նշանակում է, որ բարձրագույն կրթության ոլորտում դասավանդման և ուսուցման մշակույթի փոփոխությունը անհրաժեշտ է թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների համար, բայց իհարկե ավելի շատ մարտահրավեր էր դասախոսների համար: Երբ Բոլոնիայի գործընթացը մեկնարկեց, դասախոսները պետք է ընդունեին հարացույցի փոփոխությունը և պետք է սովորեին փոխել իրենց վերաբերմունքն ու դասավանդման ոճերը: Սա հեշտ գործընթաց չէ, և շատ երկրներում դեռևս ընթացքի մեջ է: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ Բոլոնիայի գործընթացի հաջող իրականացման համար ամենամեծ խոչընդոտը հանդիսանում է ներգրավված դասախոսական կազմի մտածելակերպը: Մեծ ջանք է պահանջվել և պահանջվում է դեկաններից, ամբիոնի վարիչներից և այլ պատասխանատու անձանցից, որպեսզի համոզեն համապատասխան դասախոսական կազմին ներգրավվել այդ գործընթացում: Հետևյալ աղյուսակում ներկայացված է դասախոսների համար մարտահրավեր հանդիսանցող հարացուցային փոփոխությունը:

Դասախոսակենտրոն դասավանդում	**Ուսանողակենտրոն դասավանդում**
Դասախոսն է ուշադրության կենտրոնում է	Ուսանողն է ուշադրության կենտրոնում
Տեղեկատվության փոխանցում դասախոսի կողմից	Գիտելիքի ակտիվ ձեռքբերում ուսանողի կողմից
Ուսուցման մեթոդը ընդհանրական է, կայուն և ստանդարտացված	Կան ուսուցման տարբեր անհատականացված մեթոդներ
Ուսանողին անհրաժեշտ է դասախոս	Ուսանողը ինքնակառավարվող է
Դասախոսը բացատրում է առաջադրված խնդիրների ճիշտ պատասխանները/լուծումները	Դասախոսը հարցեր է առաջադրում, որոնց ուսանողները պատասխանում են
Դասախոսը վարում է ուսուցման գործընթացը	Դասախոսը ուղղորդում է ուսանողներին ուսուցման գործընթացում
Լսարանը որպես ուսուցման վայր	Մեդիա գրադարանը և խմբային աշխատանքների համար նախատեսված սենյակները որպես ուսուցման վայր
Կայուն և անփոփոխ	Դինամիկ և փոփոխական
Դասախոսն ու ուսանողը միմյանց դեմ-դիմաց են	Դասախոսն ու ուսանողը աշխատում են միասին

Ծրագրի պլանավորումը հարմարեցվում է քննություններին	Ծրագրի պլանավորումն հարմարեցվում է հետադարձ կապի միջոցով ստացված արձագանքի հիման վրա
Ուսանողը կարող է ժամանակ առ ժամանակ շեղվել դասընթացից	Սոցիալական հմտությունները կարևոր դեր են խաղում
Դասախոսություններ	Քննարկումներ
Քննության վրա հիմնված գնահատում	Շարունակական գնահատում
Ժամատախտակ	Ծրագրի պլան

2. ԿՓԵՀ-ի կիրառում

Կրթական վերջնարդյունքների սահմանումն ու օգտագործումը անխուսափելիորեն կապված է հավելյալ մարտահրավերների հետ՝ Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի /ԿՓԵՀ/ կիրառում: ԿՓԵՀ-ի հաշվարկը պետք է լինի թափանցիկ՝ հիմնված կրթական վերջնարդյունքների և կրթական գործընթացի վրա: ԿՓԵՀ-ը կրթական գործընթացի ծավալի քանակական արտահայտման միջոց է՝ հիմնված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման և համապատասխան ծանրաբեռնվածության վրա: Ուսանողների կողմից ուսումնառության հաջող ավարտը սահմանված ժամկետներում հնարավորդարձնելունպատակովանհրաժեշտէարդարացիորենևհամապատասխանաբար հաշվարկել ուսանողների ծանրաբեռնվածությունը, որն անհրաժեշտ է ակնկալվող կրթական վերջնարդյունքները սահմանված ժամկետում ձեռք բերելու համար: Հաշվարկված աշխատածավալն իր մեջ պետք է ընդգրկի ուսումնական գործընթացին վերաբերող աշխատանքի բոլոր տարրերը՝ լեկցիաներ, ինքնուսուցում, քննություններին նախապատրաստում, քննություններ և այլն: Մոդուլին հատկացվող կրեդիտների քանակը նախ պետք է գնահատվի և հետո, հիմնվելով փորձի վրա, հաշվարկվի համապատասխան ակնկալվող կրթական վերջնարդյունքների հետ համահունչ:

Իհարկե մարտահրավերը հեշտ չէ դասավանդողների համար, սակայն անհրաժեշտ է այն հաղթահարել: Նախ և առաջ նրանք պետք է գնահատեն անհրաժեշտ ժամանակը և սահմանեն համապատասխան ծանրաբեռնվածությունը՝ հիմնվելով իրենց գնահատման վրա: Բայց որոշ ժամանակ հետո, օրինակ 2 տարի անց, նրանք պետք է ստուգեն արդյոք իրենց հաշվարկած ծանրաբեռնվածությունը համապատասխանում է իրականությանը, և եթե ոչ, ապա նրանք պետք է համապատասխանաբար հարմարեցնեն այն ուսանողների ծանրաբեռնվածությանը: Հետևաբար անհրաժեշտ է շարունակաբար գնահատել ծանրաբեռնվածությունը: Սա անհրաժեշտ է կիրառել թե՛ բակալավրի, թե՛ մագիստրոսի ծրագրերի համար: Հետբուհական կրթական ծրագրերը հնարավոր է պահանջեն հավելյալ կրթական վերջնարդյունքներ, ինչպես օրինակ համապատասխան մեթոդաբանական

մոտեցումներ, հետևաբար կարող են առաջարկել ԿՓԵՀ-ի հետ համապատասխանեցված մոդուլներ: Սա պարտադիր պահանջ չէ:

3. Փոխկապակցվածությունը դիպլոմի հավելվածի հետ

Պատահական չէ, որ նախարարները Բուխարեստի Կոմյունիկեում նշել են. «Կրթական ծրագրերի մշակումը, ընկալումն ու գործնական կիրառումը չափազանց կարևոր է ԿՓԵՀ-ի, դիպլոմի հավելվածի, ճանաչման, որակավորումների շրջանակների արդյունավետության և որակի ապահովման համար: Դրանք բոլորը փոխկապակցված են»:

Պատճառը միանգամայն ակնհայտ է: Դիպլոմի հավելվածը փաստաթուղթ է, որը տրվում է բարձրագույն կրթության հաստատությունների բոլոր շրջանավարտներին: Այն ֆորմալ ձևաչափով նկարագրում է այն որակավորումը, որը ստացել է շրջանավարտը: Դիպլոմի հավելվածը, բացի այլ տեղեկատվությունից, պարունակում է նաև

- կրթական ծրագրի պահանջները
- կրթական ծրագրի մասին մանրամասն տեղեկատվություն (օրինակ՝ յուրացված մոդուլներ, դասընթացներ) և անհատի կողմից ձեռք բերված կրեդիտները, ստացված միավորները/գնահատականները:

Այսպիսով, դիպլոմի հավելվածը հանդիսանում է շրջանավարտի կողմից ձեռք բերված որակավորման, յուրացված առարկաների/մոդուլների և համապատասխանաբար ձեռք բերված կրթական վերջնարդյունքների հենքային փաստաթուղթ: Բացի այդ, այս փաստաթուղթը արժեքավոր միջոց է արտերկրում ստացած որակավորումների ճանաչման գործընթացը բարելավելու համար:

4. Ինչպես գնահատել ձեռք բերված կրթական վերջնարդյունքները

Պատահական չէ, որ նախարարները Բուխարեստի Կոմյունիկեում հնչեցրեցին. «Մենք կոչ ենք անում հաստատություններին կրեդիտները կապակցել ինչպես կրթական վերջնարդյունքների, այնպես էլ ուսանողների ծանրաբեռնվածության հետ և ներառել կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատման գործընթացներում»: Կրթական վերջնարդյունքները կազմում են դասավանդման, ուսումնառության և գնահատման ընթացակարգերի՝ վերջնարդյունքների վրա հիմնված մոտեցման անբաժանելի մասը: Փորձագետները սա անվանում են «կառուցողական համապատասխանեցում», որը նշանակում է, որ դասավանդումը, ուսումնառությունն ու համապատասխան գնահատումը շարունակաբար ուղղված են ակնկալվող և ձեռք բերված կրթական վերջնարդյունքերին: Ձեռք բերված կրթական վերջնարդյունքները սահմանում են շրջանավարտի զբաղունակությունը: Եվ հակառակը՝ ակնկալվող կրթական վերջնարդյունքները պետք է հաշվի առնեն աշխատաշուկայի պահանջները: Հետևաբար ազգային և միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ձեռք բերված որակավորման

թափանցիկությունն ապահովելու (ինչպես նաև այլ բուհերում ստացած որակավորումների ճանաչման) նպատակով քննությունները պետք է կազմակերպվեն այնպես, որ չափեն և գնահատեն ձեռք բերված կրթական վերջնարդյունքները: Օրինակ պետք է տարբերակվեն՝

- առարկայական հատուկ կոմպետենցիաներ
  - իմացական
  - գործառական
- ընդհանրական կոմպետենցիաներ /օրինակ՝ խնդիրների լուծում, օտար լեզվի և համակարգչի իմացություն, վերացական մտածողություն և այլն /
- սոցիալական հմտություններ /օրինակ՝ հաղորդակցություն, համագործակցություն, կոնֆլիկտների լուծում և այն/
- անձնային կոմպետենցիաներ /օրինակ՝ ինքնակառավարում, էթիկա և այլն/

Այս համատեքստում գնահատողների համար շատ կարևոր է սահմանել գնահատման ներառական հանձնարարություններ: «Ներառական հանձնարարություն» նշանակում է սահմանել այնպիսի հանձնարարություններ, որոնք ներառում են մոդուլի /դասընթացի/ բոլոր ակնկալվող կրթական վերջնարդյունքները՝ միտված ձեռք բերված կրթական վերջնարդյունքների գնահատմանը: Դա իսկապես մեծ մարտահրավեր է գնահատողների համար: Եվ վերջապես որակի ապահովման չափող գործիքները՝ օրինակ գնահատման ու հավատարմագրման գործընթացները, պետք է հաշվի առնեն, թե որքանով են մոդուլի մակարդակում առաջադրանքներն ու քննության տեսակները թիրախավորված և համապատասխան՝ ձեռք բերված կրթական վերջնարդյունքների չափման համար:

5. Ամփոփում

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ ծրագրի և մոդուլի մակարդակներում կրթական վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու համար բուհին անհրաժեշտ է՝

- ՈԱԾ՝ որպես վստահելի հենքային փաստաթուղթ
- գործընթացի դյուրին իրականացումն ապահովող ազգային կանոնակարգեր
- համապատասխան մարդկային ռեսուրսներ, ովքեր մանկավարժական տեսանկյունից արհեստավարժ են և ովքեր ցանկություն ունեն ընդունելու հարացույցի փոփոխությունը
- համապատասխան առաջադրանքներ, որոնք կենտրոնանում են ակնկալվող և ձեռք բերված կրթական վերջնարդյունքների վրա
- քննության համապատասխան ձևեր, որոնք բավարարում են ակնկալվող կրթական վերջնարդյունքների իրական գնահատման պահանջները

Աղբյուր՝ *Declan Kennedy, Writing and using learning outcomes, published by University College Cork, Ireland, 2007*

ԿՓԵՀ-Ի ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակ՝ Հայնս Ուլրիխ Շմիդտ, Բոն, Գերմանիա
Կոնտակտային տվյալներ՝ ***heinz-ulrich.schmidt@t-online.de***

ԿՓԵՀ-ի կարևորությունը

- ապահովում է կրթական ծրագրերի և համապատասխան ծանրաբեռնվածության թափանցիկությունը և կանխում է ուսանողների գերծանրաբեռնվածությունը,
- նպաստում է ուսանողների և շրջանավարտների շարժունությանը աշխատանքի և ուսման համար,
- օգնում է կառուցել վստահություն, թափանցիկություն և համագործակցություն բարձրագույն կրթության համակարգերում,
- շեշտադրում է կրթական վերջնարդյունքները և համապատասխան գնահատումը,
- օժանդակում է ուսումնառության ձևերի ճկունացմանը, որոնցից են հարատև կրթությունը և ուսումնառության, դասավանդման և գնահատման նոր մեթոդի կիրառումը,
- ամրապնդում է անցումը այնպիսի կրթական ծրագրերի, որոնք զարգացնում են հանրության պահանջներին համապատասխանեց կարողություններ և հմտություններ:

Ծանրաբեռնվածություն. կրթական գործունեության քանակական չափում է, որը իրատեսականորեն կարող է պահանջվել կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար /օրինակ՝ լեկցիա, սեմինարներ, գործնական աշխատանք, անհատական ուսուցում, տեղեկատվության հավաքագրում, հետազոտություն, քննություններ/:

Կրեդիտ. կրթական վերջնարդյունքների ձեռքբերման և համապատասխան ծանրաբեռվածության վրա հիմնված ուսուցման ծավալի քանակական դրսևորման միջոց:

Կրեդիտների բաշխում. Առկա են կրեդիտների բաշխման բազմաթիվ մոտեցումներ, և հաստատությունն իրավասու է որոշել, թե որ մեթոդն է կիրառելու: Ստորև ներկայացված են կրեդիտների բաշխման երկու տարբեր մոտեցումներ:

1. *Ներքևից վերև.* Պրոֆեսորադասախոսական կազմը սահմանում է կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի կրթական վերջնարդյունքները, նկարագրում է կրթական գործընթացները և գնահատում է տվյալ գործընթացների իրականացման համար ուսանողների անհրաժեշտ ծանրաբեռնվածությունը: Առաջարկությունները հավաքագրվում են, վերլուծության են ենթարկվում և

սահմանված ծանրաբեռվածությունը արտահայտվում է կրեդիտներով:

- ԿՓԵՀ-ի կիրառումը բուհերի կողմից պետք է որակապես ապահովված լինի համապատասխան գործընթացների միջոցով /օրինակ՝ որակի ներքին և արտաքին գնահատումներ, ուսանողների կողմից հետադարձ կապ/:
- Կիրառելով այս մոտեցումը՝ պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր անդամները ներգրավվում են կրեդիտների բաշխման գործընթացում: Նրանք կարող են առաջարկություններ ներկայացնել կրթական վերջնարդյունքների վերաբերյալ և չափել այդ կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ ծանրաբեռվածությունը: Քննարկումների և առաջնահերթությունների սահմանման միջոցով նրանք գալիս են ընդհանուր եզրահանգման կրեդիտների բաշխման վերաբերյալ /60 կրեդիտ յուրաքանչյուր տարվա համար/:
- Կիրառելով այս տարբերակը՝ բուհերը առավելագույնս ազատ են յուրաքանչյուր բաղադրիչը ձևավորելու համար՝ կրթական վերջնարդյունքներին և ծանրաբեռվածությանը համապատասխան: Մյուս կողմից, երբ խոսքը վերաբերում է բազմագիտակարգային կամ համատեղ կրթական ծրագրերին ու շարժունությանը, տարբեր բաղադրիչները կարող են խնդրահարույց լինել:

2. *Վերևից ներքև.* Բուհը կամ դասախոսական կազմը կարող են ի սկզբանե որոշել միօրինականացնելու /ստանդարտացնելու/ կրթական բաղադրիչների ծավալը՝ յուրաքանչյուրին հատկացնելով միևնույն կրեդիտային արժեքը /օրինակ 5/, կամ տարբեր կրեդիտային արժեքներ /օրինակ 5, 10, 15/: Այդպիսով նախասահմանվում է յուրաքանչյուր բաղադրիչի համար հատկացվող կրեդիտների քանակը: Այս դեպքում դասընթացների միավորները հաճախ անվանում են «մոդուլներ»:

- Այս նախասահմանված կառուցվածքում դասախոսական կազմը սահմանում է համապատասխան և իրագործելի կրթական վերջնարդյունքներ և նկարագրում է ուսուցման գործընթացը՝ հիմնվելով բաղադրիչների ծավալի վրա: Հաշվառված ծանրաբեռնվածությունը պետք է համահունչ լինի տվյալ բաղադրիչի համար հատկացված կրեդիտների քանակին:

Ծանրաբեռնվածության կարգավորում /ներքևից վերև/

Ծանրաբեռնվածության կարգավորման նպատակն է օժանդակել՝

- տվյալ մոդուլի պատասխանատուին
- կրթական ծրագրի ղեկավարին
- ներգրավված դասախոսական կազմին

ձևավորելու, գնահատելու և սահմանելու մոդուլի համապատասխան ծանրաբեռնվածությունը: Կրեդիտների բաշխումը թիմային աշխատանք է:

Հիմնական ուղենիշներ

- սկսել նպատակներից և ակնկալվող կրթական վերջնարդյունքներից,
- համապատասխանեցնել ակնկալվող կրթական վերջնարդյունքները կրթական ծրագրի ընդհանուր նպատակներին, բուհի առաքելությանն ու տեսլականին, ինչպես նաև ՈԱԾ-ին,
- ձևավորել զբաղունակությանն ուղղված կրթական վերջնարդյունքներ,
- սահմանել ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար անհրաժեշտ դիդակտիկան և մեթոդները,
- սահմանել անհրաժեշտ բովանդակությունը կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը դյուրացնելու նպատակով,
- կիրառել բովանդակությունը արդյունավետությունը՝ այն կրճատելով ի նպաստ ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման և զբաղունակության ապահովման,
- սահմանել քննությունների համապատասխան տեսակները՝ չափելու ձեռքբերված կրթական վերջնարդյունքները,
- տրամադրել պարտադիր և այլընտրանքային գրականության ցանկը,
- սահմանել ինքնուրույն ուսուցման և խորհրդատվությունների տրամադրման անհրաժեշտ ժամաքանակը,

Ընթերցանություն

- գիտական հոդվածների ընթերցման միջին արագությունը րոպեում 100-200 բառ է,
- գիտական հոդվածների մեկ էջում միջինը 400-600 բառ է,
- A 10 ձևաչափով հոդվածի ընթերցումը պահանջում է նվազագույնը 40-60 րոպե և գրեթե նույն ժամանաքանակը գրառումներ և համադրություններ կատարելու համար,
- Հետևաբար պարտադիր գրականության քանակը պետք է սահմանափակվի,
- անհրաժեշտ է հանձնարարել կոնկրետ էջեր և ոչ թե գիրքն ամբողջությամբ,
- անհրաժեշտ է ներառել հավելյալ գրքեր ու հոդվածներ խորհուրդ տրվող

գրականության ցանկում:

Խորհրդատվության ժամեր – ինքնուրույն աշխատանքի ժամեր

- ինքնուրույն ուսուցումը (ներառյալ քննությունները) պետք է ընդգրկի ուսանողի ընդհանուր ծանրաբեռնվածության 60-70 տոկոսը՝ համաձայն ուսանողի ինքնուրույնության աճի,
- ինքնուրույն ուսուցումը կարող է ներառել ընթերցանություն, թիմային աշխատանք, ներկայացումների պատրաստում, ուսանողի պորտֆոլիո և այլն,
- ուսանողների ինքնուրույն ուսուցման ժամերը պետք է հաշվարկել՝ հաշվի առնելով դիդակտիկան, մեթոդները, բովանդակությունն ու քննությունը:

Ծանրաբեռնվածության կարգավորում /վերևից ներքև/

Խորհրդատվության ժամեր – ինքնուրույն աշխատանքի ժամեր

Օրինակ՝ դուք ցանկանում եք մշակել մոդուլ 5 կրեդիտով: 5 x 30 ժամ = 150 ժամ: Կրթական վերջնարդյունքների ձեռքբերման նպատակով ուսանողի ինքնուրույն ուսուցման ժամը կարող է լինել շաբաթական 6 ժամ: Շաբաթական 6 ժամ x 15 շաբաթ = 90 ժամ: Մնում է 60 ժամ: 60 ժամ:15 շաբաթ = շաբաթական 4 լսարանային ժամ:

Հիմա ստուգենք՝ արդյոք շաբաթական 4 լսարանային ժամը բավարար է կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար՝ հաշվի առնելով դիդակտիկան, մեթոդները և փոխազդեցությունը: Եթե արդյունքը գոհացուցիչ չէ, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

- Ինչպե՞ս կարելի է փոխել ծանրաբեռնվածությունը ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար:
- Կրճատել բովանդակությունը:
- Կիրառել քննության համապատասխան տարբերակներ:
- Արդյո՞ք բոլոր կրթական վերջնարդյունքները հավասարապես կարևոր են կրթական ծրագրի նպատակներին հասնելու համար:
- Կարո՞ղ ենք փոխել կրեդիտների քանակը մեկ այլ մոդուլի հաշվին:

  Գնահատում

  - Շարունակաբար գնահատել ծանրաբեռնվածությունը:
  - Գնահատումը կարող է իրականացվել տարբեր ձևերով՝ հարցաշար, ֆոկուս խումբ, հարցազրույց կամ ձեռք բերված արդյունքների մշտադիտարկում: Ցանկացած մեթոդի կիրառման դեպքում ուսանողների, անձնակազմի և ըստ անհրաժեշտության նաև այլ շահակիցների կողմից հետադարձ կապը կրեդիտների ստուգման և վերաբաշխման համար կարևորագույն բաղադրիչ

է կազմում:

- Գնահատել մոդուլը յուրաքանչյուր կիսամյակում:
- Տեղայնացնել արդյունքները՝ հիմնվելով փաստերի վրա:

Ծանրաբեռնվածության կարգավորում աշխատակազմի կողմից, եթե առկա է մոդուլի նկարագիրը:

1. Վերլուծել մոդուլը, որը ներառում է՝
   - յուրաքանչյուր շաբաթվա յուրաքանչյուր մոդուլի դասավանդման ժամաքանակի վերլուծություն,
   - ինքնուրույն ուսուցման համար նախատեսված ժամերի չափում՝ հաշվի առնելով ընթերցանության համար նախատեսված ժամաքանակը և գնահատման ձևը, ինչպես նաև գնահատելով ուսանողների համար անհրաժեշտ ժամաքանակը (օրինակ՝ գրավոր աշխատանքի գնահատման համար կարող է անհրաժեշտ լինել 80 ժամ, էսսեի համար՝ 20 ժամ, բազմակի ընտրությամբ թեստի համար՝ 10 ժամ և այլն),
   - մինչև կիսամյակի վերջ ժամերի ամփոփում,
   - ժամաքանակի բաշխում՝ ըստ յուրաքանչյուր կիսամյակի յուրաքանչյուր մոդուլի կրեդիտների քանակի:

Մոդուլ

Մոդուլները համակցում են առարկայական թեմատիկ և ժամանակագրական առումով ամբողջական ու առանձին բովանդակությամբ դասընթացներ, որոնց համար հատկացված է կրեդիտների որոշակի քանակ: Մոդուլները կարող են դասավանդման և ուսուցման տարբեր ձևերից կազմված լինել (օրինակ՝ դասախոսություններ, գործնական ու հետազոտական աշխատանքներ, էլեկտրոնային ուսուցում և այլն):

Մոդուլը կարող է պարունակել մեկ կամ մեկից ավելի կիսամյակի կամ մեկ ուսումնական տարվա համար նախատեսված բովանդակություն: Քննական ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով մոդուլներն ամփոփվում են մեկ քննությամբ, որի արդյունքն արձանագրվում է աստիճանի շնորհման վկայագրում: Որոշ դեպքերում մի քանի մոդուլներ կարող են ամփոփվել մեկ քննությամբ:

Տվյալ մոդուլի շրջանակում նախատեսվող քննության բովանդակությունն ուղղորդվում է մոդուլով սահմանված կրթական վերջնարդյունքներով: Քննության շրջանակը պետք է սահմանափակ լինի՝ չափելու մոդուլով սահմանված և ուսանողների կողմից ձեռք բերված վերջնարդյունքները:

Գ) ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հեղինակներ՝ Ավստրիայի համաշխարհային համալսարանական ծառայություն (WUS Austria), կոնտակտային տվյալներ՝ ***adi.kovacevic@wus-austria.org***

1. Բուհերի ֆինանսավորում
2. Կատարողականի կառավարումը բուհերում

Ներգրավվածության աստիճանի բարձրացում

Հատկապես Արևելյան Եվրոպայի երկրներում, ինչպես, օրինակ, Չեխիայում կամ Թուրքիայում, ներգրավվածության ցուցանիշները մեծապես աճել են վերջին տարիներին:



Բարձրագույն կրթության ոլորտի հիմնական ռիսկերը

Ամբողջ աշխարհում կառավարությունները բախվում են մեկ ուսանողին բաժին ընկնող ծախսերի ավելացման, ինչպես նաև ներգրավվածության ցուցանիշների բարձրացման հիմնախնդիրներին, որոնք ընդհանուր առմամբ մեծացնում են ծախսերի ճնշումը:



Համընդհանուր կերպով աճող ծախսը բարձրագույն կրթության ոլորտում և ըստ ուսանողի

2000 – 2009 թթ. ժամանակահատվածում ուսանողների թիվը, ինչպես նաև յուրաքանչյուր ուսանողի համար նախատեսված ծախսը մեծապես աճել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մի շարք անդամ երկրներում: Բարձրագույն կրթության ընդհանուր ծախսերի, ուսանողների թվի և յուրաքանչյուր ուսանողի համար նախատեսված ծախսերի փոփոխությունը 2000 – 2009 թթ. ներկայացված են ստորև (ընտրված երկրներ. կայուն գներ).

Համաշխարհային միտումները որպես ծախսի ճնշման ռիսկի դեմ պայքարի միջոց

Նշված ծախսի ճնշումը հաջողությամբ հաղթահարելու համար ուսումնասիրվել են որոշակի միջազգային միտումներ:

Մասնավոր ֆինանսավորման աճող մասնաբաժիններ
Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում /«Նոր հանրային կառավարում»/
Դասավանդման և հետազոտության տարբերակում
Միտումներ
Մրցակցային ֆինանսավորում
Ուսանողների ուսման վճարի աճ
Համալսարանների ուղղվածությունը դեպի շուկա


Index of change
(2000 = 100)
Tertiary education
220
200
180
160
140
120
100
80
60
United Kingdom
Korea
Estonia[2]
Spain
Portugal[1]
Poland[1]
Finland
Czech Republic
Mexico
Austria
Japan
Denmark
France
Ireland[2]
OECD average
Belgium
Italy
Sweden
Germany
Norway[2]
Slovak Republic
Netherlands
Hungary[1, 2]
Brazil[1, 2]
Iceland
United States
Israel
Switzerland[1, 2]
Change in expenditure
Change in the number of students (in full-time equivalents)
Change in expenditure per student
1. Public institutions only.
2. Public expenditure only.

Քննարկվելիք թեմաներ

Քննարկվելիք թեմաներն առնչվում են ԵՄ բարձրագույն կրթության առանցքային մարտահրավերներին:



Մեկ ուսանողի հաշվարկով ծախսի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջև հարաբերությունը

Ընդհանուր առմամբ, առկա է հստակ և դրական միտում ունեցող՝ բուհի մեկ ուսանողի հաշվարկով ծախսի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջև հարաբերություն:

Բուհի մեկ ուսանողի հաշվարկով տարեկան ծախսի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջև հարաբերությունը (2009 թ.)



Բարձրագույն կրթությանն ուղղված ծախսը որպես ՀՆԱ-ի % Արևմտյան բալկանյան երկրներում:



Հայաստանը բարձրագույն կրթության վրա ծախսում է ավելի քիչ (ՀՆԱ-ի %), քան ԵՄ երկրները:

ՀՆԱ-ի %-ը՝ ծախսված բարձրագույն կրթության ուղղությամբ 2008 թ. (ընտրված երկրներ)

Ֆինանսական աղբյուրների տեսակները

Առկա են բուհերի ֆինանսական աղբյուրների հետևյալ երեք տեսակները.



Բուհերի ֆինանսավորման 2 տարբեր մեթոդաբանությունները

Ընդհանուր ներդրումային ֆինանսավորումից բացի առկա են բուհերի ֆինանսավորման երկու նոր ձևեր, որոնք մշակվել են վերջին տասնամյակների ընթացքում:

Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում	Մրցակցային ֆինանսավորում
• Բուհերը պետք է տրամադրեն արդյունքներ և մատուցեն որոշակի ծառայություններ, որոնք սահմանված են մի քանի տարվա կտրվածքով կատարողականի վերաբերյալ բուհի և նախարարության միջև կնքված համաձայնագրերով: • Կատարողականը չափվում է որոշակի չափանիշներով և այլ ցուցանիշներով, որոնք սահմանված են կատարողականի համաձայնագրերով: • Գլխավոր նպատակն է պարգևատրել հետազոտության ոլորտում հաջողություն արձանագրածներին, որն էլ խթանում է հետազոտության որակի բարելավումը՝ չափվելով կատարողականի ընտրված ցուցանիշներով: • Ենթադրաբար վերջնարդյունքի ձեռքբերումն ուղղակիորեն առնչվում է հետազոտության գործունեությանը:	• Բուհերին առաջարկվում են հետազոտական ծրագրեր, որոնք գնահատվում են գործընկերային գնահատմամբ: • Կարող է առաջարկվել պետության կամ կազմակերպությունների կողմից: • Ավելի լայն տարածում ունի տեխնիկական ուղղվածությամբ բուհերի շրջանակում: • Երկու հիմնական առանձնահատկությունները հետևյալն են. – բուհերից պահանջվում է աջակցել այն նպատակների իրագործմանը, որոնք միտված են ազգային տնտեսության բարելավմանը, – պետությունը շարունակաբար կիրառում է ռեսուրսների բաշխման, շուկային ուղղված մոտեցման մշակման մրցակցային մեխանիզմներ՝ բուհի հետազոտության ֆինանսավորման համար:

1. Բուհերի ֆինանսավորում

2. Կատարողականի կառավարում բարձրագույն կրթության համակարգում

Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում – մրցակցային ֆինանսավորում

Ֆինանսավորման երկու տեսակներն է՝ կատարողականի վրա հիմնված ֆինանսավորումը և մրցակցային ֆինանսավորումը, ունեն առավելություններ և թերություններ:

	Կատարողականի (ցուցանիշների) վրա հիմնված ֆինանսավորում	Մրցակցային ֆինանսավորում (ծրագրային ֆինանսավորում)
Առավելություններ	• ուղղորդում է դեպի վերջնարդյունքը (օրինակ՝ շրջանավարտների քանակը, հրատարակումների թիվը) • խթանում է հետազոտողներին՝ կենտրոնանալու արդյունքների վրա • օժանդակում է պլանավորման գործընթացին • երաշխավորում է ամուր բազային կրթություն	• օժանդակում ճկունությանը և դրա՝ որպես առաջնահերթության պահպանմանը • ամրապնդում է համագործակցությունը ֆինանսական աղբյուրների բազմազանեցման միջոցով • ստեղծում է գիտելիք ծրագրերի վերանայումներից ստացված արձագանքների հիման վրա • ապահովում է հաշվետվողականությունը
Թերություններ	• կարող է նպաստել կարճաժամկետ կողմնորոշմանը • գրեթե չի նպաստում միջգիտակարգային կապի ամրապնդմանը • կարող է ուղղորդել հետազոտության տարբեր մոտեցումների միօրինականացմանը • կարող է հանգեցնել հրատարակման արժեքի բարձրացման, եթե ցուցանիշները դառնում են նպատակներ • արժևորում է նախորդ ձեռքբերումները	• խոչընդոտում է երիտասարդ հետազոտողներին՝ պլանավորելու պաշտոնուղու երկարաժամկետ զարգացումը • ստեղծում է հավելյալ ժամանակային ծախսեր • կարող է ռիսկեր ստեղծել նոր գործընկերների հետ համատեղ ծրագրեր մշակելիս • նվազեցնում է երկարաժամկետ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները

Բարձրագույն կրթության ֆինանսավորման աղբյուրներ

Եվրոպական երկրները միմյանցից տարբերվում են ըստ բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման:



Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը Մեծ Բրիտանիայում

Մեծ Բրիտանիայում ուսանողների ուսման վարձերը և լրացուցիչ ֆինանսական աղբյուրները կազմում են բուհերի ընդհանուր բյուջեի հիմնական մասը:



Առանցքային փաստեր Մեծ Բրիտանիայի համար

- **Մոդելի հիմնական նկարագրիչը**, միավոր արժեքի մոդել, համալսարանի ռեսուրսները հաշվարկվում են այն ձեռաչափի հիման վրա, որը հաշվի է առնում ուսանողների թվաքանակը և այլ գործոններ (հետազոտական գործունեություն, հետազոտողների թվաքանակ, գրադարաններ և այլն)
- **Բարձրագույն կրթությանը բաժին ընկնող ծախսերը** որպես ֆունտստերլինգի % 1.3 (0.9 հանրային/0.4 մասնավոր) 2005
- **25-34 տարեկանների շրջանում շրջանավարտների %-ը**-37
- **Ուսանողների վարձավճարներ** – սկսած 2012-ից մինչև 9000 ֆունտստերլինգ (մոտ 10500 եվրո) ԵՄ քաղաքացիների համար /միջինը/ , ոչ ԵՄ քաղաքացիների համար՝ սահմանվում է յուրաքանչյուր հաստատության կողմից
- **Ուսանողական վարկեր և ֆինանսական աջակցություն**– լավ զարգացած ավանդույթ է
- **Ընդունելության սահմանափակում**- սահմանվում է յուրաքանչյուր հաստատության կողմից
- **Դասավանդման և հետազոտության կապը** – ֆինանսավորվում է առանձին հաստատությունների կողմից

Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը Ֆինլանդիայում

Ֆինլանդիայում ուսանողները չեն վճարում ուսման վարձ, սակայն միևնույն ժամանակ նրանք ընդունվում են մրցութային կարգով:

Առանցքային փաստեր Ֆինլանդիայի համար

- **Մոդելի հիմնական նկարագրիչը**, կենտրոնանում է համալսարանների հետ կնքված կատարողականի համաձայնագրերի վրա հետազոտության և դասավանդման համար (քանակական և որակական մուտքի և արդյունքի վրա հիմնված խնդիրներ)
- **Բարձրագույն կրթությանը բաժին ընկնող ծախսերը** որպես ֆունտստերլինգի % 1.3 (1.0 հանրային/0.3 մասնավոր) 2005
- **25-34 տարեկանների շրջանում շրջանավարտների %-ը**-38
- **Ուսանողների վարձավճարներ** – առկա չէ
- **Ծախսերի տարբերակում** –կախված է մագիստրատուրայի ուսանողների համար նախատեսված առարկաներից
- **Ուսանողական վարկեր և ֆինանսական աջակցություն**- Ընդունված ուսանողները ստանում են կրթաթոշակներ/վարկեր կեցության համար
- **Ընդունելության սահմանափակում**- ընդունվող ուսանողների քանակը որոշվում է նախարարության հետ համատեղ: Քննությունների գործընթացը սահմանվում է յուրաքանչյուր հաստատության կողմից, սովորաբար դիմորդների 40-55 % ընդունվում են
- **Դասավանդման և հետազոտության կապը** – ֆինանսավորվում և գնահատվում են առանձին

Ֆինլանդիայում կատարողականի համաձայնագրերի օրինակ

Օուլուի համալսարանի ու Կրթության և մշակույթի նախարարության միջև կնքված կատարողականի համաձայնագիրը ներառում է 4 թիրախներ և 5 չափելի խնդիրներ:

Օուլուի համալսարանի զարգացման առանցքային ուղղությունները (2013-2016)	Խնդիրները (միջինը 2013-2016 ժամանակահատվածի համար)
➢ Բուհը **միջազգային հետազոտության ոլորտում կամրապնդի համագործակցային կապերն** այն բուհերի հետ, որոնք առաջատարն են տվյալ ոլորտային ուղղությունների զարգացման հարցում՝ կիրառելով 2013 թ. իրականացված	➢ Բարձրագույն կրթության ավելի բարձր աստիճանների ցուցանիշ – 1,545 ➢ Հետբուհական աստիճանների ցուցանիշ – 158 ➢ Բարձրագույն կրթության ավելի ցածր աստիճանների ցուցանիշ – 1,280

հետազոտության ընդհանուր գնահատման արդյունքները: ➢ Բուհը կբարելավի իր չափումները՝ **ձեռք բերելու միջազգային մակարդակում մրցունակ հետազոտական ֆինանսավորում** (Օուլուի համալսարանի հիմնավորմամբ): ➢ Բուհը կկատարելագործի իր չափումները՝ **ուսման ավարտելիության** ցուցանիշները բարելավելու նպատակով: ➢ Բուհը **կվերանայի ուսանողների ընդունելության իր համակարգը**:	➢ Օտարերկրյա ուսանողների աստիճանների ցուցանիշ – 600 ➢ Բուհ եկած և բուհից գնացած ուսանողների փոխանակման (առնվազն 3 ամսով) ցուցանիշ - 900

Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումն Ավստրիայում

Ավստրիայում հանրային ֆինանսավորումը մեծ դեր է խաղում, և միայն ընտրված բուհերում են ուսանողները վճարում ուսման վարձ:



Առանցքային փաստեր ֆինլանդիայի համար

- **Մոդելի հիմնական նկարագրիչը**, հիմնական հատկացումները հիմնվում են կատարողականի համաձայնագրերի վրա (ընդհանուր բյուջեի 80%-ը) և 20%-հիմնված վերջին տարիների ձեռքբերումների վրա, որը սահմանվում է հատուկ ցուցիչներով
- **Բարձրագույն կրթությանը բաժին ընկնող ծախսերը** որպես ֆունտստերլինգի % 1.3 (1.2 հանրային/0.1 մասնավոր) 2011
- **25-34 տարեկանների շրջանում շրջանավարտների %-ը**- 19
- **Ուսանողների վարձավճարներ** – առկա չէ (միայն հատուկ հաստատություններում՝հիմնված կոնկրետ առանձնահատկությունների վրա, օրինակ ուսանողների տարիք, կրթության տևողություն)
- **Ծախսերի տարբերակում** –առկա չէ
- **Ուսանողական վարկեր և ֆինանսական աջակցություն**- կրթաթոշակները հիմնվում են շնորհների և ֆինանսական կարիքների վրա
- **Ընդունելության սահմանափակում**- միայն հատուկ առարկաների և/կամ հաստատությունների համար /լրագրություն, բժշկություն/
- **Դասավանդման և հետազոտության կապը** –ոչ մի հատուկ տարանջատում

Ավստրիայի բուհական համակարգ

Ավստրիայի բուհական համակարգի ներկայիս կազմակերպումը հիմնվում է UG2002 օրենքի վրա, որն ուժի մեջ է մտել 2004 թվականից:



Ավստրիայի բուհերի ֆինանսավորման գործընթացի ակնարկ

Բուհերի բյուջեին պայմանավորված է ֆեդերալ բյուջեով, և որը քննարկվում և հաստատվում է Գիտության և հետազոտության նախարարի կողմից: Հաշվի է առնվում նաև նախորդ կատարողականը:



Ավստրիայի ֆինանսավորման գործընթացն ազգային մակարդակում

Ամեն տարի Ազգային Ժողովը սահմանում է ֆինանսական սահմանափակ միջոցներ ստորաբաժանումների համար (4 տարվա կտրվածքով), ինչպես նաև հստակ բյուջե հաջորդող տարվա համար, որը ներառում է բարձրագույն կրթությանն ուղղված ֆինանսավորումը:

Ազգային մակար-դակ	**Ֆեդերալ բյուջետային օրենսդրություն** (4 տարվա ֆինանսական սահմանափակմամբ)	➢ Ներկայացվում է Ազգային Ժողովին Ֆեդերալ կառավարության կողմից ամեն տարի՝ ապրիլի 30-ին: ➢ Քառամյա ֆինանսական սահմանափակումներ 5 բաժանումների համար ("Rubriken", օրինակ՝ Կրթություն, հետազոտություն, արվեստներ և մշակույթ) և մեկամյա ֆինանսական սահմանափակումներ ստորաբաժանումների համար ("Untergliederungen", օրինակ՝ Գիտություն և հետազոտություն, որը ներառում է բուհի բյուջեն): ➢ Հաստատվում է Ազգային Ժողովի կողմից (Ֆեդերալ բյուջետային օրենսդրություն):
	Ֆեդերալ ֆինանսական ակտ (հստակ սահմանված բյուջե հաջորդ տարվա համար)	➢ Անհատական ֆինանսավորում՝ ներառյալ հաջորդ տարվա համար նախատեսված եկամտի և ծախսերի ընդհանուր բնութագիրը, որն ամեն տարի ներկայացվում է Ազգային Ժողովին Ֆեդերալ կառավարության կողմից մինչև հոկտեմբերի 22-ը: ➢ Բյուջեն չի կարող գերազանցել ֆեդերալ բյուջետային օրենսդրական շրջանակով սահմանված ֆինանսական չափին: ➢ Հաստատվում է Ազգային Ժողովի կողմից (Ֆեդերալ ֆինանսական ակտ):
Բուհի մակարդակ		

Ավստրիայի բուհերի ֆինանսավորման գործընթացի մանրամասներ (1/3)

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի երրորդ տարում բոլոր բուհերը մշակում են կատարողականի համաձայնագրի նախնական տարբերակ հաջորդ 3 տարիների համար և ներկայացնում Գիտության և հետազոտության նախարարին:

Բուհի մակարդակ	**Կատարողականի համաձայնագրի նախնական տարբերակ** (ներկայացվում է բուհի կողմից)	➢ Կատարողականի համաձայնագիրը հաջորդող 3 տարիների համար ներկայացվում է որոշակի համալսարանների կողմից Գիտության և հետազոտության նախարարությանը (BMWF) մինչև տվյալ եռամյա ժամանակահատվածում 3-րդ տարվա ապրիլի 30-ը: ➢ Կատարողականի համաձայնագիրը կարգավորվում է համապատասխան օրենքով (UG2002 – համալսարանի օրենք): ➢ Կատարողականի համաձայնագրի բովանդակություն. 1. կատարողական, որը հիմնվում է խնդիրների, կառավարման սկզբունքների և բուհի առաքելության վրա, որը ներառում է կատարողականի ցուցանիշները, որոնք ընդհանուր բյուջեի լրացուցիչ 20%-ի հիմքն են կազմում: 2. կատարողականի համար պետության՝ սահմանված չափանիշների վրա հիմնված հիմնական ֆինանսավորում (ընդհանուր բյուջեի 20%-ը) տրամադրելու պատասխանատվությունը: 3. Խնդիրների բովանդակությունն ու ծավալը, ինչպես նաև խնդիրներին առնչվող վճարումների ժամկետները: 4. Ֆինանսական տարում հիմնական ֆինանսավորման ցուցանիշի անկում: 5. Չափումներ, որոնք պետք է կիրառել կատարողականի ձախողման դեպքում 6. Հաշվետվության ընթացակարգ
	Կատարողականի համաձայնագրի շուրջ բանակցությունների վարում և լուծում	
	Տարեկան հաշվետվություն (ներկայացվում է բուհի կողմից նախարարությանը)	
Ազգային մակարդակ		

Ավստրիայի բուհերի ֆինանսավորման գործընթացի մանրամասներ (2/3)

Մշակված տարբերակները քննարկվում են նախարարության կողմից, և մինչև տարվա ավարտը ներկայացվում է վերջնական եզրակացությունը:

Բուհի մակարդակ	**Կատարողականի համաձայնագրի նախնական տարբերակ** (ներկայացվում է բուհի կողմից)	➢ Նախարարությունը տալիս է կարծիք ներկայացված փաստաթղթերի նախնական տարբերակների վերաբերյալ մինչև միևնույն (3-րդ)տարվա օգոստոսի 30-ը: ➢ Վերջնական բանակցություններն ամփոփվում են մինչև միևնույն (3-րդ) տարվա դեկտեմբերի 31-ը: ➢ Հիմնական ֆինանսավորման (3-րդ ընդհանուր բյուջեի 80%-ը) վերաբերյալ բանակցություններն իրականանում են ըստ հետևյալ չափանիշների. 1. բուհի (ֆինանսական) կարիքը 2. պահանջները (շուկայի և բոլոր բուհերի) 3. կատարողականը 4. հանրային խնդիրները ➢ Ընդհանուր բյուջեի մնացած 20%-ը հիմնվում է այն նախասահմանված խնդիրների լուծման վրա, որոնք չափվում են գործունեության նախասահմանված ցուցանիշներով (որակական և քանակական) հետևյալ ոլորտներում. 1. դասավանդում 2. հետազոտություն/զարգացում և արվեստների զարգացում 3. հանրային խնդիրներ ➢ Չափանիշները, ինչպես նաև վճարման պայմանները կարգավորվում են նախարարության և ֆինանսների նախարարի միջև փոխհամաձայնեցված կանոնակարգով:
	Կատարողականի համաձայնագրի շուրջ բանակցությունների վարում և լուծում	
	Տարեկան հաշվետվություն (ներկայացվում է բուհի կողմից նախարարությանը)	
Ազգային մակարդակ		

Ի վերջո, յուրաքանչյուր բուհ տարեկան կտրվածքով պետք է «գիտելիքի հավասարակշռման» միջոցով ներկայացնի իր առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն նախարարությանը, որն իր հերթին հաշվետու է Ազգային Ժողովին:

<table>
<tr><td rowspan="3">Բուհի մակարդակ</td><td>Կատարողականի համաձայնագրի նախնական տարբերակ
(ներկայացվում է բուհի կողմից)</td><td rowspan="3">➢ Յուրաքանչյուր բուհ պետք է ունենա իր առանձնահատկություններին հատուկ հաշվառման և հաշվետվողականության ապահովման համակարգ
➢ Յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 30-ը յուրաքանչյուր բուհի ռեկտորատ բուհի խորհրդին պետք է ներկայացնի նախորդ տարվա հաշվետվությունը «գիտելիքի հավասարակշռման» միջոցով:
➢ «Գիտելիքի հավասարակշռությունը» պետք է ներառի հետևյալ նվազագույն բովանդակային պահանջները.
1. ոլորտը, հանրային և բուհի խնդիրները, ինչպես նաև ռազմավարությունները
2. մտավոր կապիտալ ներառյալ մարդկային ռեսուրսներ, կառուցվածք, համագործակցային կապեր
3. Կատարողականի համաձայնագրում սահմանված կատարողականի գործընթացներ, ինչպես նաև վերջնարդյունքների ցուցանիշներ
➢ Երրորդ տարում ներկայացվող հաշվետվությունը պետք է ներառի ակնկալվող կատարողականի արդյունքների արտացոլումը եռամյա ժամանակահատվածի ավարտին:
➢ Նախարարությունն իր հերթին ներկայացնում է բուհի Խորհրդի կողմից արձանագրված արդյունքներն Ազգային Ժողովին:</td></tr>
<tr><td>Կատարողականի համաձայնագրի շուրջ բանակցությունների վարում և լուծում</td></tr>
<tr><td>Տարեկան հաշվետվություն
(ներկայացվում է բուհի կողմից նախարարությանը)</td></tr>
<tr><td colspan="2">Ազգային մակարդակ</td><td></td></tr>
</table>

Ավստրիայում կատարողականի համաձայնագիրների օրինակ - ակնկարկ

Կատարողականի համաձայնագիրը կազմվում է ըստ կատարողականի տարբեր ոլորտների և ենթաոլորտների, և բուհը սահմանում է որոշակի խնդիրներ ու չափումներ:

Կատարողականի համաձայնագրում (կնքված Վիեննայում բնական ռեսուրսների և կենսագիտության համալսարանի և նախարարության միջև) նշված գործունեության ոլորտների ընդհանուր բնութագիր 2013-2015 ժամանակահատվածի համար
Ա) Ռազմավարական խնդիրներ, դիրք, բուհի զարգացում
- Ա1 Որակի ապահովում
- Ա2 Անձնական զարգացում և կառուցվածք
Բ) Հետազոտություն/զարգացում և արվեստների զարգացում
- Բ1 Ազգային մակարդակում լայնամասշտաբ հետազոտության ենթակառուցվածք
- Բ2 Միջազգային մակարդակում լայնամասշտաբ հետազոտության ենթակառուցվածք
Գ1) Կրթական ծրագրեր/դասավանդում
Գ2) Հետագա կրթություն
Դ) Գործունեության այլ ոլորտներ
- Դ1 Հանրային խնդիրներ
- Դ2 Միջազգայնություն և ճկունություն
- Դ3 Համագործակցություն
- Դ 4 Որոշակի ոլորտներ
- Դ5 Նախագծի մշակում/վերակառուցում

III. ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԵՐ

Այս բաժնում ներկայացվում են այս ծրագրում ընդգրկված բուհերի (ԵՄ երկրների և ՀՀ-ի) դեպքերի ուսումնասիրության օրինակներ՝ խթանելու գիտելիքի փոխանցումը GOVERN ծրագրի գործընկերության շրջանակներում:

Ուսանողների մասնակցությունը բուհերի կառավարման գործընթացներում – հայաստանյան փորձ

Հեղինակ՝ xxx, կոնտակտային տվյալներ՝ xxx

Ըստ Tempus Govern ծրագրի գործընկեր Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի (ՀՈՒԱԱ/ANSA)՝ անհրաժեշտ է փոխել բուհերի կառավարման գործընթացներում ուսանողների ներգրավվածության համակարգը: ՀՈՒԱԱ-ն, լինելով ուսանողական ամենամեծ ներկայացուցչությունը Հայաստանում, առանձնացրել է այն առանցքային խնդիրները, որոնց ուսանողներն առհասարակ բախվում են բուհերի կառավարման գործընթացներում ներգրավվելիս:

Այսպիսով, ներկայիս իրավիճակը ցույց է տալիս, որ բուհերի կառավարման մարմիններում ուսանողների ներգրավվածության ամենատարածված մոդելը ուսանողական խորհուրդներն են, որոնք կառավարման տարբեր օղակներում կազմում են 25%: Ուսանողական խորհուրդները լսելի են դարձնում ուսանողների ձայնն ու ներկայացնում նրանց իրավունքները: Այդուհանդերձ, այս մոդելը որոշ հարցերի տեղիք է տալիս, որոնք առ այսօր անպատասխան են: Այդ հարցերից մեկն այն է, թե արդյոք ուսանողական ներկայացուցչականության 25%-ն ձայների օպտիմալ քանակ է: Առկա են մի շարք եվրոպական մոդելներ, որոնց դեպքում ուսանողները որոշ չափով ունեն ձայնի իրավունք, և մեր խնդիրն է պարզել, թե որն է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի համար ամենանպատակահարմարը: Միևնույն ժամանակ հասկանալի է, որ ներկայացուցչականության արդյունավետությունը պայմանավորված չէ միայն ձայների քանակով, այլ նաև կառավարման մարմիններում ներգրավված ուսանողների որակավորումներով:



Բուհի կառավարման խորհուրդ

Երկրորդ՝ անհրաժեշտ է պարզել նաև, թե արդյոք ուսանողների ներկայացուցչությունն ապահովվում է բուհի կառավարման բոլոր օղակներում: Ընդ որում, ներկայացուցչության ապահովումը դեռևս չի ենթադրում, որ ուսանողները պետք է քվեարկեն միայն որոշումների կայացման ժամանակ (որը պարտադիր է)՝ չունենալով բավարար տեղեկատվություն խնդրի վերաբերյալ արդյունավետ որոշում կայացնելու համար: Բոլոր մակարդակներում ներգրավվածությունը նշանակում է, որ առկա են ուսանողական խմբեր, որոնք բավականաչափ հմուտ են ուսանողների իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու գործում, և այդ ուսանողական ներկայացուցիչները ներգրավված են ոչ միայն որոշումների կայացման գործընթացում, այլև իրենց կրթական ծրագրերին, ուսումնական պլանների մշակմանն ու նման այլ խնդիրներին առնչվող գործընթացներում: Սա նշանակում է, որ պետք է առկա լինի օրենք, համաձայն որի՝ ուսանողները պետք է ներգրավված լինեն ամբիոնների և համապատասխան այլ ստորաբաժանումների կողմից կրթական ծրագրերի և ուսումնական պլանների մշակման գործընթացներում:

ՀՈՒԱԱ-ն իրականացրել է սոցիոլոգիական հետազոտություն տարբեր համալսարանների 721 ուսանողների շրջանում՝ պարզելու նրանց բավարարվածության աստիճանն իրենց իրավունքների պաշտպանության առումով:

Ո՞ր ոլորտների կառավարման գործընթացները պետք է կառավարվեն ուսանողների կողմից, ովքեր ներգրավված են բուհի



կառավարման համակարգում:

Մեր խնդիրն է նաև պարզել, թե արդյոք որոշումների կայացման գործընթացներում ներգրավված ուսանողներն ունեն համապատասխան և բավարար հմտություններ, քանի որ մեր անցկացրած նախորդող հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ուսխորհուրդների հանդեպ վստահությունը մեծ խնդիր է: Ուսանողների մեծամասնությունը կարծում է, որ ուսխորհուրդներում ներգրավված ուսանողները բավականաչափ հմուտ չեն՝ բուհի կառավարման խորհուրդներում ներկայացնելու ուսանողական համակազմը: Ուրեմն անհրաժեշտ է ձևավորել այնպիսի ուսանողներից բաղկացած նոր խմբեր, որոնք բավականին մոտիվացված են ու բավարար գիտելիք ունեն նշված գործընթացներում



ներգրավվելու և ներկայացուցչություն ապահովելու համար:

Ուսանողների կողմից ներկայացվե՞լ են առաջարկներ բուհերի կառավարման խորհուրդներին:



Բուհի կառավարման մարմիններում ներգրավված ուսանողները որքանո՞վ են տեղեկացված և հմուտ ուսանողների շահերը պաշտպանելու համար:



Եվ վերջապես, առկա են որոշ վիճակագրական տվյալներ, որոնք առնչվում են այն խնդրին, թե ինչպիսի ուսանողներ պետք է ներգրավված լինեն բուհերի կառավարման գործընթացներում:

Ինչպիսի՞ ուսանողներ պետք է ներգրավված լինեն բուհի կառավարման համակարգում:



ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Հեղինակ՝ Շարիստան Մելքոնյան
Կոնտակտային տվյալ՝ ***smelkonian@aua.am***

Ակնարկ

Որպես Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) հանձնառության մի մաս, այն է՝ ապահովել որակ փաստեր վրա հիմնված արտացոլման, շահակիցների կողմից կատարվող ներդրումների ու համագործակցային վերլուծության միջոցով, ակադեմիական աջակցության կենտրոններն իրականացնում են շարունակական վերանայման ու գնահատման գործընթացներ:

ՀԱՀ-ի կրթական ծրագրերն ընդգրկում են ուսանողի ուսումնառության գնահատումը, որն իրականացվում է ուսանողների ուսումնառության տարեկան գնահատման, ինչպես նաև կրթական ծրագրերի շարունակական վերանայման գործընթացների միջոցով, որը ներառում է ինքնագնահատումը, ինքնագնահատման աուդիտը և ամփոփիչ հանդիպումը (ՀԱՀ-ի կրթական ծրագրի վերանայման գործընթացի՝ ինքնագնահատման և ինքնագնահատման աուդիտի ուղենիշները կարելի է գտնել այստեղ՝ *http://iro.aua.am/self-study-guidelines/*): Ակադեմիական աջակցության կենտրոններն իրականացնում են վերանայման նմանատիպ գործընթացներ:

ՀԱՀ-ում առկա ակադեմիական աջակցության կենտրոններն են ՀԱՀ AGBU Փափազյան գրադարանը, Տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների ծառայությունները, ռեգիստրարի գրասենյակը, ընդունելության գրասենյակը, ինստիտուցիոնալ հետազոտության գրասենյակը, ուսանողների հաջողության կենտրոնը և շրջանավարտների ու պաշտոնուղու զարգացման գրասենյակը (ACDO): Այս բոլոր ստորաբաժանումների առաջնային գործառութային շրջանակը չի ընդգրկում ակադեմիական կամ վերահսկիչ գործողությունների իրականացում, այլ դրանք աջակցում են ուսանողների ուսումնառությանը:

Չնայած նրան, որ ռազմավարական պլանավորումը, շահակիցների բավարարվածության գնահատման հարցումները և փաստերի վրա հիմնված վերանայման այլ գործընթացները տարիներ շարունակ բուհի գործունեության մասն են կազմել, սակայն ՀԱՀ-ի ակադեմիական աջակցության կենտրոնները մինչև վերջին ժամանակներս չեն ունեցել վերանայման ֆորմալ գործընթաց: 2013-2014 թթ. ակադեմիական աջակցության կենտրոնների ղեկավարների հետ համագործակցության շրջանակներում մշակվել է «Ակադեմիական աջակցության

կենտրոնների վերանայման ուղենիշներ»-ը (*http://iro.aua.am/files/2012/04/Guidelines-for-Review-of-Academic-Support-Units-FINAL.docx)*: Ուղենիշի մշակման գործընթացի միջոցով նշված կենտրոնները հնարավորություն ունեն ըստ անհրաժեշտության վերանայելու և ստուգելու իրենց առաքելությունն ու խնդիրները:

Առաքելության մշակում և վերանայում

Ստորաբաժանման առաքելության մշակումը տվյալ ստորաբաժանման աշխատակազմի հետ համագործակցային գործընթաց է, որի ընթացքում այդ աշխատակազմի յուրաքանչյուր անդամ կարող է վերանայել իր և իր գործընկերների աշխատանքի նկարագրերը՝ անդրադառնալով իր և նրանց աշխատանքային գործունեության առանցքային խնդիրներին, իսկ ստորաբաժանման ղեկավարը կարող է պատրաստել նախնական զեկույց և տարածել այն աշխատակազմի շրջանում՝ ակնկալելով համապատասխան արձագանքներ:

Առաքելությունը հակիրճ սահմանում է, թե ինչ է անում տվյալ ստորաբաժանումը: Առաքելությունը՝

- սահմանում է ստորաբաժանման գործունեության նպատակը (ներառյալ պարտականություններն ու շահակիցներին/հաճախորդներին տրամադրվող ծառայությունները)
- նկարագրում է, թե ինչպես է ստորաբաժանումն աջակցում ուսումնական միջավայրին
- նկարագրում է, թե ինչպես է ստորաբաժանումը հաղորդակցվում այլ ստորաբաժանումների հետ:

Ընդհանուր առմամբ, առաքելությունը՝

- նկարագրում է ստորաբաժանման նպատակը
- կարճ է և հստակ սահմանված
- քաջածանոթ է ստորաբաժանման աշխատակազմին,
- համահունչ է բուհի առաքելությանը:

Խնդիրներ

Սեփական առաքելությունը մշակելուց և վերանայելուց հետո ակադեմիական աջակցության կենտրոնն այնուհետև մշակում է խնդիրները, որոնք՝

- կոնկրետ, չափելի սահմանումներ են՝ միտված կենտրոնի առաքելության

խրախուսմանը, և սահմանում են կենտրոնի հիմնական գործառույթների և ծառայությունների մատուցման արդյունքները
- ըստ անհրաժեշտության վերանայվում և/կամ ստուգվում են ռազմավարական պլանավորման ժամանակ (ավելի հաճախ, քան կենտրոնի առաքելությունը):

Խնդիրները պետք է՝
- լինեն կոնկրետ, հստակ սահմանված և չափելի,
- լինեն դժվար հաղթահարվող, սակայն հասանելի,
- քանակական առումով իրատեսական լինեն,
- նպատակաուղղված լինեն դեպի այն ոլորտները, որոնք ըստ աշխատակազմի, ենթակա են բարելավման
- փոխկապակցված լինեն այն ծառայությունների հետ, որոնք մատուցում է տվյալ կենտրոնը,
- ուղղակի կերպով վերահսկվեն տվյալ կենտրոնի կողմից:

Գնահատման գործընթաց

Ուղենիշներն ակադեմիական աջակցության կենտրոններին հնարավորություն են տալիս գնահատելու տարեկան մեկից մինչև երեք խնդիր՝ կենտրոնանալով այն խնդիրների վրա, որոնց համար հասանելի են համապատասխան ռեսուրսներ (այդ թվում՝ մարդկային ռեսուրսներ), և որոնք համահունչ են առկա գերակայություններին, որոնք սահմանվել են բուհի ղեկավարության խրախուսմամբ:

Գնահատման և հավատարմագրման գրասենյակը կոչված է նաև օժանդակելու ակադեմիական աջակցության կենտրոններին այս գործընթացներն իրականացնելու հարցում:

Որպես կանոն՝ այս գործընթացը ներառում է հետևյալ քայլերը՝
- խնդիրների սահմանում,
- գնահատման մեթոդների սահմանում,
- սահմանված խնդիրների իրականացման աստիճանի գնահատում,
- բարելավման հիմքերի տրամադրում՝ հիմնվելով գնահատման արդյունքների վերլուծության վրա:



Ուսումնական տարվա սկզբնական շրջանում ակադեմիական աջակցության կենտրոնները պատրաստում են գնահատման պլան: Վերջինս սովորաբար ընդգրկում է 7 ոլորտներ, որոնք ներկայացված են ստորև.

Գնահատման պլանի նմուշօրինակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ գնահատման պլան (ստորաբաժանման մակարդակով)
Ուսումնասիրության առարկա՝ *գնահատման ենթակա խնդիր(ներ)*
Հիմնավորում՝ *ինչու՞ է սա անհրաժեշտ ստորաբաժանմանն այս ժամանակահատվածի համար:*
Բուհի և ստորաբաժանման առաքելությունների համահունչություն՝ *ինչպե՞ս է այս խնդիրը համապատասխանում բուհի և կենտրոնի առաքելություններին:*

Գնահատման ժամանակացույց՝ *գնահատման ի՞նչ գործիքներ (հարցումներ, տվյալներ, հաշվետվություններ, ֆոկուս խմբեր) են կիրառվելու, և ե՞րբ է իրականացվելու վերանայումը:*
Գնահատման մեթոդների նկարագրություն՝ *վերոնշյալ գործիքների հակիրճ նկարագրություն*
Գնահատող թիմ՝ *ովքե՞ր են ներգրավվելու վերանայման գործընթացում:*
Հանգույցի փակում՝ տվյալները/փաստերը կօգտագործվեն հետևյալ նպատակներով...

Ակադեմիական աջակցության կենտրոններն այնուհետև հավաքագրում ու վերլուծության են ենթարկում տեղեկատվությունը և տեղեկացնում արդյունքների մասին: Այդ արդյունքները վերանայվում են տվյալ կենտրոնի կողմից և այնուհետև ուղարկվում գնահատման և հավատարմագրման գրասենյակ վերանայման և հետագա քննարկման նպատակով: Պլաններն ու հաշվետվություններն արխիվացվում են ներքին ցանցում, և դրանք հասանելի են ակադեմիական աջակցության բոլոր կենտրոններին:

Նախատեսված ժամանակացույց

Ստորև ներկայացվում է ակադեմիական աջակցության կենտրոնների վերանայման համար նախատեսված ժամանակացույցը:

- օգոստոս/սեպտեմբեր՝ կենտրոնի աշխատակազմի հանդիպում պլանի մշակման համար (ցանկալի է մշակել պլանները մի քանի տարիների կտրվածքով)
- հոկտեմբերի 15՝ գնահատման պլանի հաստատում (այն տարածում են ներքին ցանցով)
- հունիսի 30՝ գնահատման զեկույցի/հաշվետվության հաստատում (այն տարածում են ներքին ցանցով)

Մարտահրավերներ

Ակադեմիական աջակցության կենտրոնների վերանայման ինստիտուցիոնալացման ժամանակ անշուշտ առաջ են գալիս մի շարք մարտահրավերներ: Այդ մարտահրավերներից են մարդկային ռեսուրսների, ինչպես նաև առաջնահերթությունների սակավությունը: Բացի

այդ, չնայած վերայանումը հաճախ ներառում է ուսանողների և այլ շահակիցների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, ուսանողների արդյունավետ ներգրավվածության միջոցների բացահայտումը դեռևս մարտահրավեր է:

Ամփոփում

Ակադեմիական աջակցության կենտրոնների պարբերական գնահատումը ՀԱՀ-ի որակի ապահովման առանցքային բաղադրիչներից է: Տարեկան գնահատման միջոցով վերանայումը դիտվում է որպես շարունակական գործընթաց և որակի ապահովման հենասյուն, որի հիմքում ընկած է փաստերի վրա հիմնված որոշումների կայացումը: Ակադեմիական աջակցության կենտրոնները որոշակի ժամանակ են տրամադրում շարունակական բարելավմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով խնդիրների պարբերական վերանայմանը: Առավել կարևոր է այն, որ այս գործընթացն ապահովում է նաև ակադեմիական աջակցության կենտրոնների կողմից իրականացված փոփոխությունների ազդեցության վերլուծությունը, որն էլ հանդիսանում է հանգույցի փակումը:

Հղման աղբյուրներ

Guidelines for Review of Academic Support Unit: http://iro.aua.am/files/2012/04/Guidelines-for-Review-of-Academic-Support-Units-FINAL.docx.

Nichols, Karen W. and James O. Nichols. (2000) The Departmental Guide and Record Book for Student Outcomes Assessment and Institutional Effectiveness. New York: Agathon Press.

Administrative Units Assessment. Emory University. Retrieved from http://www.oirpe.emory.edu/Assessment/Administrative%20Units%20Assessment.html.

Support Unit Review. California State University Stanislaus. Retrieved from http://www.csustan.edu/oaqa/ProgReview/SupportUnitReviewProcess.html

Process Analysis and Design. University of California Davis Organizational Excellence. retrieved from http://oe.ucdavis.edu/

ԲՈՒՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՊԱԼԵՐՄՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ԻՏԱԼԻԱ) ՕՐԻՆԱԿՈՎ

Հեղինակ՝ xxx, կոնտակտային տվյալներ՝ xxx

Իտալիայի բարձրագույն կրթության համակարգի և Պալերմոյի համալսարանի ակնարկ

Իտալիայի կրթական համակարգի հիմնական սկզբունքները, մասնավորապես բարձրագույն կրթությունը, սահմանվել են դեռևս Իտալիայի Սահմանադրությամբ, որն ընդունվել է 1947 թվականին: Սահմանադրության 33-րդ հոդվածը սահմանում է, որ «... արվեստն ու գիտությունն անկախ են, և հետևապես դասավանդումը նույնպես անկախ պետք է լինի»: Համաձայն օրենքի՝ բարձրագույն կրթության հիմնական նպատակը երկու ուղղվածություն ունի՝ խթանել ազգի գիտական առաջընթացը և բոլոր քաղաքացիներին տրամադրել կրթական ծառայություններ ու վերապատրաստումներ, որոնք կխթանեն նրանց զբաղունակության ապահովումը: Իտալիայի բարձրագույն կրթության համակարգը երկկողմանի է և բաղակացած է հետևյալ բաժիններից՝

- **բուհական ոլորտ,**
- **ոչ բուհական ոլորտ**, որը ներառում է կրթության հետևյալ 4 տեսակները (բուհական մակարդակում)՝ արվեստների բարձրագույն դպրոց, լեզվի միջնորդության բարձրագույն կրթության, բարձրագույն ներառական կրթություն (FIS) (օրինակ՝ բարձրագույն տեխնիկական կրթություն), հատուկ ոլորտներ (դիվանագիտական, արխիվային, վերանորոգման, ռազմական և այլն):

Ոչ բուհական ոլորտը ներառում է կրթության հետևյալ 4 տեսակները.

- Դիզայնի բարձրագույն դպրոցներ՝ արվեստների պոլիտեխնիկ, կերպարվեստի ակադեմիաներ, կիրառական արվեստի բարձրագույն ուսումնական հաստատություններ, կոնսերվատորիաներ և երաժշտական ուղղությամբ այլ հաստատություններ, ազգային ակադեմիաներ
- Լեզվի միջնորդության բարձրագույն կրթություն՝ լեզվի միջնորդների համար նախատեսված բարձրագույն դպրոցներ
- բարձրագույն ներառական կրթություն (FIS)՝ բարձրագույն տեխնիկական կրթության և վերապատրաստման ծրագրեր (IFTS)
- որոշ հատուկ ոլորտներ, որոնք համապատասխան հաստատության հետ մեկտեղ բացի կրթության նախարարությունից ենթարկվում են նաև այլ նախարարություններին:

Ամբողջ ոլորտը, հատկապես բարձրագույն կրթությունը, էապես վերափոխվել է

1990-ականների վերջին, որի հիմքում ընկած էր ազգային կրթական համակարգը եվրոպական համակարգին, մասնավորապես Բոլոնիայի գործընթացին համահունչ դարձնելու ազգային դիրքորոշումը, որին էլ Իտալիան հենց սկզբից ձեռնամուխ եղավ: Համահունչ լինելով այս մոդելին՝ Իտալիայի համալսարանական կրթությունը ներկայումս ամբողջովին հիմնված է ուսումնառության հետևյալ երեք հիմնական շրջափուլերի վրա՝

Առաջին շրջափուլ

- բակալավրի ծրագիր (3 տարի)
- մեկ շրջափուլով աստիճան (5 կամ 6 տարի)

Երկրորդ շրջափուլ

- մագիստրոսական ծրագիր (2 տարի)
- 1-ին մակարդակի մասնագետի պատրաստում

Երրորդ շրջափուլ

- հետբուհական (դոկտորանտուրա)
- մասնագիտացման դպրոց
- 2-րդ մակարդակի մասնագետի պատրաստում

Իտալիայի համալսարանները նախկինում մեծ ինքնավարություն ունեցող առանձին կազմակերպություններ էին համարվում, որոնց համակարգման և համագործակցության շրջանակը մեծ չէր, թեև դրանք ֆորմալ կարգով պատկանում էին պետական բուհական համակարգին: Ինստիտուցիոնալ կառավարման համապարփակ բարեփոխումը (Օրենք 240/2010 – “Legge Gelimini”) փոխեց Իտալիայի բուհական համակարգը՝ վերլուծելով հետևյալ 5 ուղղությունների ազդեցությունը.

- **արտաքին կանոնակարգեր.** պետության կողմից կիրառվող վերևից-ներքև կառավարումը կանոնակարգվում է օրենքների հրապարակմամբ, որի միջոցով կառավարությունն ընդունում է համապատասխան վարքականոնը:
- **արտաքին ուղղորդում**. առնչվում է ընդհանուր նպատակներին և ընթացակարգային կանոններին՝ համալսարաններին որոշ չափով տալով ճկունության հնարավորություն: Սա կարող է փոխհամաձայնեցվել բարձրագույն կրթության արտաքին շահակիցների հետ:
- **մրցակցություն.** սուղ ռեսուրսների բաշխումը բուհերի միջև առկա մրցակցային գործընթացների միջով:
- **ակադեմիական ինքնակառավարում**. գործունեության ինքնագնահատում և վերահսկում գործընկերային գնահատման միջոցով:

- **վարչական ինքնակառավարում.** ֆորմալ հիերարխիկ ղեկավար պաշտոններ բուհերում:

Gelmini օրենքը բուհերին մասնակի ինքնուրույնություն է տալիս՝ թույլ տալով մշակել սեփական կանոնադրությունը, բայց միևնույն ժամանակ հետևելով օրենքով սահմանված և Կրթության նախարարության կողմից հաստատված որոշակի ուղեցույցներին: Այդ պատճառով ներկայումս Իտալիայի մի շարք համալսարաններ ներկայացնում են միևնույն ներքին կառուցվածքը, որը բաղկացած է **կառավարման հետևյալ 6 մարմիններից՝** Ռեկտոր, Ակադեմիական սենատ, Կառավարման խորհուրդ, գլխավոր տնօրեն, միջազգային գնահատման բաժին և աուդիտորների խորհուրդ:

Այդուամենայնիվ, օրենքը դեռևս վիճահարույց է: Այն միան մասնակի է փոխել Իտալիայի համալսարանական կրթական համակարգ և թերությունների միայն մի մասն է շտկել՝ դուրս թողնելով այնպիսի կարևոր խնդիրները, ինչպիսիք են՝

- ՊԴ կազմի համալրման գործընթացի կառավարման ամբողջական ինքնավարությունը,
- Որոշումների կայացման գործընթացը, որը դեռևս հիմնված է ներքին համաձայնության վրա,
- Արդյունավետ արտաքին ուղղորդման բացակայությունը:

Գործում են 95 բուհեր՝ 67 պետական և 28 ոչ պետական բուհեր, որոնցից 11-ը տելեմատիկ (telematic) ոչ պետական բուհեր են: Ավելին, գործում են արվեստների և երաժշտության ուղղությամբ 115 հաստատություններ: Կախված կրթական ծրագրից՝ ուսանողներին տրվում են կրեդիտներ՝ համաձայն բուհի կողմից ընդունված կրեդիտների բաշխման ներքին համակարգի (CFU - Crediti Formativi Universitari):

Կրեդիտային համակարգը համակարգային ձևով նկարագրում է կրթական ծրագիրը՝ դրա բաղադրիչներին կցելով կրեդիտներ: Բարձրագույն կրթության ոլորտում կրեդիտների սահմանումը կարող է հիմնված լինել տարբեր չափումների վրա, ինչպիսիք են ուսանողի ծանրաբեռնվածությունը, կրթական վերջնարդյունքներն ու խորհրդատվության ժամերը: CFU կրեդիտները համահունչ են ԿՓԵՀ-ին: Բուհի կրեդիտների համակարգը միտված է աջակցելու ուսանողների շարժունությանն ազգային և միջազգային մակարդակներում: Կրեդիտները (CFU) միավորներ են, որոնք կիրառվում են չափելու ուսանողից պահանջվող ծանրաբեռնվածության (տվյալ դասընթացի շրջանակում ուսանողից պահանջվող աշխատանքների) ողջ ծավալը՝ հաշված ուսումնառության ժամաքանակով: Մեկ կրեդիտը համապատասխանում է աշխատանքային 25 ժամի: Մեկ ուսումնական տարվա համար պահանջվում է 60 կրեդիտի ձեռքբերում: Կրեդիտները ձեռք են բերվում քննությունները հաջողությամբ հանձնելուց և յուրաքանչյուր բուհի կողմից հաստատված գնահատման այլ ձևերով: Դրանք չեն հաշվարկվում ընդհանուր գնահատականով և հետևապես կախված

չեն քննություններից (կամ գնահատման այլ ձևերից) ստացված գնահատականներից:

1980-ականներից սկսած՝ Պալերմոյի համալսարանի կառուցվածքը նույնպես ենթարկվել է ձևափոխման, և մինչ այժմ էլ տեղի են ունենում բարելավմանն ուղղված փոփոխություններ (Դասավանդման և հետազոտության ինստիտուտների, ինչպես նաև 20 բաժինների և 5 միջգիտակարգային կամ միջհաղորդակցական կառույցների միավորում), կրճատվում են ծախսերը, և ամրապնդվում է մարդկային կապիտալը: Առաջարկվում են տարեկան մոտ 122 դասընթացներ (առաջին և երկրորդ շրջափուլերում), ինչպես նաև 44 մագիստրոսական ու 23 հետբուհական ծրագրեր՝ նպատակաուղղված ոլորտային մասնագիտական զարգացմանը, և դրանք հաճախ իրականացվում են այլ հաստատությունների ու կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում, որի արդյունքում 2013-2014 ուսումնական տարում առաջին կուրսի ուսանողների թիվը կազմեց 11,085:

Պալերմոյի համալսարանն ամուր կապեր է հաստատում աշխատաշուկայի հետ, մասնավորապես առաջին շրջափուլում գտնվող 3-րդ կուրսի և 2-րդ շրջափուլում գտնվող 2-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպվում են պրակտիկաներ հանրային և մասնավոր սեկտորներում գործող կազմակերպություններում ու գործակալություններում:

Պալերմոյի համալսարանի կառավարման ներկայիս համակարգը բաղկացած է՝

- Ռեկտորից,
- Համալսարանի ակադեմիական սենատից,
- Որակի ապահովման նախագահությունից,
- ՊԴ կազմի և ուսանողների միացյալ հանձնաժողովից,
- Ներքին գնահատման կենտրոնից,
- Որակի ապահովման արտաքին համակարգից (ANVUR):

Բուհի կառավարման թվային համակարգն ու ռազմավարությունը

Պալերմոյի համալսարանի տեղեկատվական համակարգի պատմությունն ու առաջընթացն սկսվել է հիմնական ծրագրերից, որոնք կամ կազմվել են բուհի ներսում (բուհի տեղեկատվական ծառայությունների կողմից), կամ հավաքագրվել են որպես բազմաշերտ ծրագրային բաղադրիչներ՝ ձեռք բերված տարբեր աղբյուրներից: Ամենահինը COBOL գործընթացների համակազմն է, որը նպատակաուղղված է դիդակտիկային առնչվող գործունեությանը և կիրառվում է ուսանողներին տրամադրվող ծառայությունների գրասենյակի գործունեության համար:

Վերջին տարիների ընթացքում մի շարք կարևոր փոփոխություններ են տեղի ունեցել համակարգի բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝

- տվյալների բազայի ներմուծում և փոխգործակցություն,
- ուսանողներին տրամադրվող ծառայությունների գրասենյակի նախկին գործառույթների փոխարինում,
- կայքի թարմացված տարբերակը՝ որպես CMS-ի վրա հիմնված վեբ-պորտալ:

Պալերմոյի համալսարանի տվյալների բազաները գործում են Oracle մեխանիզմի (ժամանակակից SS համակարգ, որն օժանդակում է բուհում ուսանողներին, այլ շահակիցներին, յուրաքանչյուր համակարգին և գործընթացին), բազմաթիվ սերվերների և տեսողական կապերի միջոցով, որոնք ներառում են՝

- բուհի վեբ-պորտալը *(http://portale.unipa.it/)*
- դիդակտիկայի վեբ-պորտալը
- ինտրանետի հնարավորությունները,
- գրանցման էլեկտրոնային գրասենյակը:

Նշված բուհի վեբկայքի գործառութայնությունը ներառում է ուսանողների պաշտոնուղիները, դասընթացների պլանավորումն ու մշտադիտարկումը, տեղաբաշխումը, աշախատակազմի վերաբերյալ տեղեկատվությունը, ֆինանսական հաշվառումը, առցանց քարտուղարությունը, էլեկտրոնային նամակը: Որպես գլխավոր պահուստային համակարգ՝ բուհն օգտագործում է Cloud-ը , որը փաստաթղթային պահուստ և վիրտուալացման համար անհրաժեշտ VM-Ware է տրամադրում (դիդակտիկ լաբորատորիաները կահավորված են էլեկտրոնային տերմինալներով, որոնք աշխատում են առցանց մեխանիզմով՝ դասախոսի կարիքներին համապատասխան):

Չնայած առկա է առցանց համակարգ, ուսանողների գրանցումն իրականացվում է հարցաշարերի լրացման և առցանց գրանցման միջոցով: Ուսանողները կարող են գրանցվել քննության համար բուհի վեբ-պորտալի միջոցով: Ավարտելուց հետո ուսանողը կարող է առցանց գրանցման միջոցով տեսնել իր ուսումնական պաշտոնուղին, իսկ գործատուները կարող են խնդրել տեսնելու ուսանողի արդյունքները:

Պալերմոյի համալսարանի տեղեկատվական համակարգ

1.Ուսանողների պաշտոնուղիների ներգրավում
   1.1.Ուսանողներին տրամադրվող ծառայությունների գրասենյակ
   1.2.Ուսանողներին տրամադրվող ծառայություններ
2.Դիդակտիկ պլանավորում
3.Դիդակտիկ մշտադիտարկում
   3.1.Առցանց քննություններ
   3.2.Դասավանդման գործընթացի կառավարում
4.Տեղաբաշխում

5.Հետազոտական արդյունքների շտեմարան

6.Աշխատակազմ

6.1.Պաշտոնուղիներ

6.2.Վճարումներ

7.Ֆինանսական հաշվառում

8.Գրանցման գրասենյակ

9.ՏՏ ծառայություններ

9.1.Wi-fi

9.2.Էլեկտրոնային նամակ

9.3.VOIP

9.4.Google



Պալերմոյի ՏՏ համակարգի ապագան

Պալերմոյի համալսարանն ակտիվորեն մասնակցում է ՏՏ համակարգի արդիականացմանն ուղղված ծրագրերին, որի օրինակ է **«Թվայնացում և ապանյութականացում» ծրագիրը (“Digitalization & Dematerialization” Project):** Ծրագիրն իրականացվել է Իտալիայի կառավարության կողմից Թվային Իտալիայի գործակալության **(AGID-Agency for Digital Italy)** աջակցությամբ և միտված է արտադրության գործընթացների ամբողջական ապանյութականացման թվային տեխնոլոգիաների միջոցով (ծրագրի համար նախատեսված բյուջեն կազմել 2.2 միլիոն եվրո):

Առանցքային խնդիրներ

- Դիդակտիկային, հետազոտությանը, մարդկային ռեսուրսներին և հաշվառմանն առնչվող բոլոր գործընթացների հականյութականացում,
- Ինտեգրացված տեղեկատվական համակարգի մշակում՝ ուղղված աշխատակազմի և մարդկային ռեսուրսների տվյալների միասնական բազայի կառավարմանը,
- հետազոտական ծրագրերին առնչվող ծախսերի վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների կառավարման համապատասխան գործիքների տրամադրում բուհի ստորաբաժանումներին,
- Նախարարության տեղեկատվական համակարգի հետ փոխգործակցության հնարավորության ընձեռում,
- Բուհի գործունեության շրջանակում դիդակտիկային և հետազոտությանն առնչվող հիմնական գործընթացների փաստաթղթաշրջանառության թվայնացում,
- Տեղեկատվական որոշակի աղբյուրի միջոցով ծախսերի հաշվառման կառավարման տեղեկատվական ինտեգրացիոն համակարգի ստեղծում:

Պալերմոյի համալսարանը պլանավորում է գնել U-GOV համակարգ, որը համապարփակ ծրագրային հարթակ է տրամադրում և բավարարում է բուհի տեղեկատվական ժամանակակից համակարգի բոլոր կարիքները:

Ներկա պահին բուհը շեշտադրում է իր աշխատակազմի մասնագիտական զարգացումն ու ծառայություններն ավելի ժամանակակից դարձնելու անհրաժեշտությունը հետևյալ միջոցների կիրառմամբ՝

- աշխատանքային խմբի ձևավորում վեբի պահպանման և զարգացման ուղղությամբ աշխատելու համար,
- աշխատակազմի բոլոր անդամների պատասխանատվության բարձրացում իրենց աշխատանքների արդյունքների թվային տարբերակների հրատարակման համար,
- թեմատիկ ուղղվածությունների կենտրոնացման միջոցով նախագծերի մշակում
- որոնման համակարգի կարգավորում,
- բջջային հավելվածների ստեղծում դեպի ծառայություններ մուտք գործելու համար: